

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Յիշելով Մարտի Մեկը

2008 թուականի Մարտի 1-ի վաղ առաւօտեան, ոստիկանական միաւորներ յարակեցան Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ մէկ շարքէ աւելի նստացոյց կատարող ժողովուրդի վրայ, որոնք իրենց բողոքը կը յայտնէին նախագահական ընտրութիւններու պաշտօնական արդիւններուն դէմ:

Բռնի ուժով հրապարակէն հեռացուած ժողովուրդը ու որոնց միացած տասնեակ հազարաւորներ, նոյն օրը հաւաքուեցան Ալեքսանդր Միասնիկեանի արձանին մօտ գտնուող հրապարակին վրայ: Քոչարեանական ապօրէն իշխանութիւնները, զգալով մօտալուտ վտանգը, օգտագործեցին բանակային միաւորներ եւ օլիկարխներու պատկանող զինեալ աւագակախութիւններ, ցոյցերուն մերձակայ թաղերուն մէջ զնդակահարելով 10 անմեղներ, մինչ հարիւրաւոր ուրիշներ վիրաւորուեցան:

Չոհեբը որպէս պատրուակ օգտագործելով, երկրէն ներս հաստատուեցաւ արտակարգ իրավիճակ, սահմանափակուեցան ամէն տեսակի ազատութիւնները, կատարուեցան զանգուածային ձերբակալութիւններ ու բանտերը լեցուեցան ընդդիմադիր գործիչներով:

Այս ողբերգական իրադարձութիւններէն տարիներ ետք, ոչ մէկ անհատ տակաւին պատասխանատուութեան չէ ենթարկուած: Ժողովուրդի մօտ տիրող կարծիքը այն է թէ, առանց իշխանափոխութեան կարելի պիտի չըլլայ պատասխանատուութեան կանչել Մարտ 1-ի հրահանգողներն ու գործադրողները, որոնց ինքնուրիշը ծանօթ է բոլորին ու անոնցմէ շատեր, այսօր կը գտնուին իշխանութեան վրայ ու երկիրէ կ'առաջնորդեն աղէտէ-աղէտ:

Մարտ 1-ը դարձաւ նորանկախ Հայաստանի պատմութեան ամենէն սեւ էջերէն մէկը:

Այս օրերուն Հայաստան կը պատրաստուի անցնիլ կառավարման խորհրդարանական համակարգի: Յառաջիկայ ընտրութիւնները կոչուած են դառնալու կարելի է անուրիշ մը, որոնց ընթացքին պիտի վնասուի նաեւ երկրի ինքնիշխանութեան հարցը:

Մեր մաղթանքն է, որ նախագահ Սերժ Սարգսեան աւարտելով իր պաշտօնավարման երկրորդ եւ վերջին շրջանը, դառնայ երաշխաւորողը՝ ազատ եւ արդար ընտրութիւններու, որոնք միջոցաւ ձեւաւորուի նոր իշխանութիւն ու վերականգնուի ժողովուրդի վստահութիւնը իր դեկավարութեան հանդէպ:

Ու այս բոլորը, որպէսզի այսուհետեւ Մարտի մէկը տեղի չունենան մեր հայրենիքէն ներս, ու երկիրը գտնէ բնականոն զարգացման նախապայքը:

«ՄԱՍԻՍ»

Երեւանի Մէջ Նշուեցաւ Մարտ 1-ի Սպանդի 8-րդ Տարելիցը



Ժողովուրդը կը յարգէ Մարտ 1-ի զոհերու յիշատակը

2008-ի Մարտի 1-ի սպանդի 8-րդ տարելիցի առթիւ, Հայաստանի ընդդիմադիր խումբը կը կազմակերպուէին միասնական հաւաք եւ երթ կազմակերպեցին «Ընդդէմ պետական անարդարութեան» կարգախօսով:

Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Գոնկրէսը, Ստեփան Դեմիրճեանի՝ Հայաստանի Ժողովրդական Կուսակցութիւնը, Բաֆֆի Յովհաննիսեանի ու Ժորայր Սէֆիլեանի նախաձեռնած «Նոր Հայաստան» շարժման միացած էին նաեւ Պարոյր Հայրիկեանի ղեկավարած «Ազգային Ինքնորոշում Միաւորում»-ը, Աշոտ Մանուկեանի «Հայաստան» նախաձեռնութիւնը եւ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը, որոնք ղեկավարներէն է Նիկոլ Փաշինեանը:

Ազատութեան հրապարակին վրայ ելույթ ունեցաւ ՀԱԿ փոխնախագահ Արամ Մանուկեանը, չիշեցնելով, որ Մարտի 1-ին տեղի ունեցած 10 սպանութիւններուն համար մինչեւ օրս ոեւէ մէկը պատասխանատուութեան չէ ենթարկուած:

Ապա, «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեան ընթերցեց ընդդիմութեան միացեալ յայտարարութիւնը, ուր զուգահեռներ կային վերջերս կայացած սահմանադրական հանրաքուէի հետ՝ շեշտելով, որ «ուեթիմը շարունակում է Մարտի 1-ի տրամաբանութեան զարգացմամբ մերժել ժողովրդի

Շաբ.ը էջ 4

«Սոււնկայիթի Զարդերը Հակահայկական Քարոզչութեան Գագաթնակէտն էին», Յայտարարեց Ատամ Շիֆ

Սոււնկայիթի Զարդերու 28րդ տարելիցին առթիւ, ԱՄՆ Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ ելույթ ունենալով Ներկայացուցիչներու Տունէն ներս յայտարարեց, որ դէպքերը պատահական չէին, այլ տարիներ շարունակ կատարի հակահայկական քարոզչութեան հետեւանքն էին:

Ան կոչ ըրաւ յարգել Ատրպէյճանի Սոււնկայիթ քաղաքի հայ բնակչութեան Զարդերու 28-ամեակը: Գոնկրէսական յիշեցուց, որ 1988 թուականի Փետրուար 27-29, յաջորդական 3 օրերու ընթացքին, ատրպէյճանցիները սպաննած եւ խոշտանգած էին հարիւրաւոր հայերու, կանայք եւ աղջիկներ բռնաբարած, զոհերուն ողջ-ողջ այրելով: «Ատրպէյճանի իշխանութիւնները շատ քիչ ջանքեր գործադրեցին մեղաւորներուն պատժելու համար, փորձելով առ այսօր կոծկել Սոււնկայիթեան կոտորածի դաժանութիւնները: Սակայն այդ-



ԱՄՆ Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ

պիտով բռնութիւնները չաւարտուեցան: Սոււնկայիթի Զարդերուն յաջորդեցին 1990-ին Պաքուի հայերու կոտորածները»:

«Սոււնկայիթի Զարդերն ու անոնց յաջորդած հայերու հալածանքները կը հարցնեն ինչպե՞ս կարող էին իրենց բռնաճակատային զարգացումը կատարելու համար, որոնք իրենց բարձրացուցած հարցը քաղաքական ըլլալէ բացի՝ աւելի շատ խղճի հարց է:

Շաբ.ը էջ 4

Հայոց Ցեղասպանութեան Շուրջ Բուռն Քննարկումներ Գերմանիոյ Խորհրդարանէն Ներս

Գերմանիոյ Պունտսթայգէն (խորհրդարան) ներս Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի շուրջ տեղի ունեցող քննարկումներու ընթացքին իշխող Քրիստոնեայ-Դեմոկրատական Միութիւն եւ Քրիստոնեայ Սոցիալական Միութիւն համախոհական կառավարութեան ներկայացուցիչները նախընտրեցին չվստանալ թուրքիոյ հետ գաղթականներու հարցով բանակցելին գործընթացը:

Կանաչներու կուսակցութիւնը առաջարկեց բանաձեւը քուէարկութեան դնել գաղթականներու հարցով յաջորդ ամիս կայանալիք թուրքիա - եւրոպական Միութիւն գագաթի ժողովէն չետոյ:

Կողմերը համաձայնութեան եկան վերամշակել եւ քննարկման դնել մէկ, միասնական բանաձեւ, որ կը պարունակի երեք հիմնադրոյթներ՝ յստակ յայտարարել, որ 1915 թուականի դէպքերը ցեղասպանութիւն են, ընդունիլ Գերմանիոյ պատմական մեղսակցութիւնը, նպաստել հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւմանը:

Կանաչներու կուսակցութեան համանախագահ եւ օրինագծի հեղինակներէն Ջեմ Օզդեմիր դժգոհութիւն յայտնեց իշխող գոալիսիայի՝ «Էրտողանին չբարկացնելու» դիրքորոշման վերաբերեալ:

Վերջերս Պոլսոյ հայկական «Ակօս» թերթին տրուած հարցազրոյցի ընթացքին Օզդեմիր ըսած էր, որ խորհրդարանական ուժերը հիմնականին մէջ կ'աջակցին իրենց բանաձեւին: Սակայն, երբ յառաջ կու գայ միջպետական յարաբերութիւններու հարցը, բանաձեւը կը յայտնուի փակուղիի առջեւ:

Բանաձեւի համահեղինակ, ազգութեամբ թուրք Օզդեմիր ընդգծած է, որ իրենց բարձրացուցած հարցը քաղաքական ըլլալէ բացի՝ աւելի շատ խղճի հարց է:

2015 թուականի Մարտին, երբ այս հարցը կրկին խորհրդարանի օրակարգին վրայ էր, խորհրդարանի նախագահ Նոբերթ Լամերտը յայտարարած էր, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին Օսմանեան կայսրութիւնում ամբողջ աշխարհի աչքի առաջ տեղի ունեցածը ցեղասպանութիւն էր:

Գերմանիոյ նախագահ Եոսիպ Գաուկ եւս Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին նուիրուած յիշատակի արարողութեան ժամանակ օգտագործել էր ցեղասպանութիւն եզրոյթը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Կոռուպցիայի Դեմ Պայքարի Փոխարեն՝ Պայքար Կոալիցիայի Համար

Հանրապետական կոռուպցիո- թեան ու Դաշնակցութեան ազ- գափրկիչ եւ ապագայակերտ գոր- ծակցութեան հանդէպ հասարակու- թեան թերահաւատութիւնը ակն- յայտ է, ինչի պատճառն, իհարկէ, ոչ անցեալն է եւ ոչ էլ ապագան, այլ ներկան՝ խօսուածներկան: Ընդամէ- նը մի հանգամանքը հիմք է հան- դիսանում այդ գործակցութեան հանդէպ թերահաւատութեան հա- մար:

Բանն այն է, որ այդ երկու ուժերը որեւէ յօդաբաշխ պատաս- խան այդպէս էլ չտուեցին, թէ ինչն էր պակասում ՀՀԿ-ին անելու աչն, ինչ պատրաստում են կամ խոստանում են անել ՀՅԴ-ի հետ: Ընդ որում՝ այդ պարզ հարցի պատասխանը ոչ միայն ՀՀԿ-ն, այլ ՀՅԴ-ն էլ չի տուել: Կամ չունեն եւ իրենք էլ չզորտեն, թէ ինչու են միաւորուել, կամ գիտեն, որ միա- կորումը բոլորովին այլ նպատակ- ներ ունի, որի մասին հանրութեա- նը ասել չեն կարող: Իհարկէ, տեսականում բացառել պէտք չէ, որ ՀՅԴ-ն ու ՀՀԿ-ն կարող են արդիւնաւէտ աշխատելու հասա- րակութեանը ցոյց տալ, թէ ինչ- որ բան են փոխում:

Տեսական այդ հնարաւորու- թիւնը, սակայն, վերաբերում է կոամետիկ փոփոխութիւններին, որովհետեւ խորքային փոփոխու- թեան կամքի եւ ցանկութեան պարագայում արւում են բոլորո- վին այլ քայլեր, եւ Դաշնակցու- թիւնն, օրինակ, այդ դէպքում իշ- խանութիւնից պէտք է պահանջեր մի պաշտօն, ընդամենը մէկը՝ ոս- տիկանութեան պետի կամ գլխա- կոր դատարագի, կամ ԱԱԾ պետի պաշտօնը, կամ Քննչականի պետի պաշտօնը: Կամ երեք պորտֆելի փոխարէն պէտք է պահանջեր այդ կառուցներից որեւէ երկուսի դե- կավարութիւնը: Հայաստանում այլ տեղ անելի ք չկայ, այլ տեղ ինդի- չկայ: Բոլոր ինդիւրները գալիս են այդ կառուցներում առկայ ինդի- ներից: Իհարկէ, հասկանալի է, որ այդ կառուցների ինդիւրներն էլ գալիս են իշխանութեան քաղա- քական կամքի եւ ցանկութեան բացակայութիւնից, բայց եթէ ինչ- որ բան է փոխում, ապա այդ փոփոխութիւնը կարող է եւ պէտք է սկսուի միայն այդ կառուցներից:

Դրանք են, որ Հայաստանում կոչուած են եւ ի գօրու են, ունեն բոլոր լծակները կոռուպցիայի դէմ պայքարելու համար: Իսկ Հայաս- տանի համակարգային ինդիւրների առանցքում կոռուպցիան է: Ընդ որում՝ այն ներթափանցել է պետա- կան կառավարման համակարգ եւ անգամ հասարակական չարաբե- րութիւններ այն աստիճան, որ դրա դէմ, այսպէս ասած, նոր- մատիւլային պայքարը արդէն ոչ միայն ծիծաղելի է, այլ նաեւ վտանգաւոր, որովհետեւ պետու- թիւնը, պետականութիւնը ժամա- նակ են կորցնում:

Կոռուպցիան է պատճառը, որ Հայաստանում չկայ տնտեսական մրցակցութիւն, եւ հետեւաբար՝ նաեւ զարգացման դինամիկա, կո- ոռուպցիան է պատճառը, որ Հա- յաստանում առկայ է տնտեսական ռեսուրսների ծայրաստիճան բե- լեւոցութեամբ, կոռուպցիան է պատճառը, որ Հայաստանում չկայ արդարադատութիւն եւ անկախ դատական համակարգ, որը քաղա- քացիների մօտ կը սերմանի պաշտ-

պանուածութեան զգացում եւ ինք- նավստահութիւն, կոռուպցիան է պատճառը, որ Հայաստանում քա- ղաքականութիւնից մինչեւ կենցաղ առկայ է արտօնեալների մի դաս, որը հասարակութեան մօտ առա- ջացնում է օտարութիւն սեփական երկրի հանդէպ եւ արտագաղթի ոչ պակաս խթան է դարձել, քան սոցիալ-տնտեսական ծանրութիւնը:

Իսկ ինչն է կոռուպցիայի պատճառը: Արժէքները, մտածո- ղութիւնը, մարդկանց տեսակը, պատկերացումները: Դրանով է պայմանաւորուած նաեւ, որ պայ- քարի համար ընտրում է ոչ թէ իրաւական լծակը, այլ, այսպէս ասած, նորմատիւլային՝ օրէնսդրա- կան փոփոխութիւններ եւ այլն: Որովհետեւ իրաւականը չի տալիս լրողելու հնարաւորութիւն, իրա- ւականը ամէն ինչ շատ յատակ է դարձնում, գրեթէ սեւ ու սպի- տակ՝ համակարգը կամ բացայայ- տում եւ պատասխանատուութեան է ենթարկում կոռուպցիոներներին՝ դնելով դատարանի եւ հանրային դատի առաջ, կամ չի անում այդ բանը եւ պետութիւնը թաղուած է մնում կոռուպցիոն սինեմաների մէջ:

Իսկ ահա նորմատիւլայինը, երբ խօսուում է օրէնքների փոփո- խութիւնների, այսպէս ասած՝ կա- ոռուցութեամբ քայլին բարեփոխումնե- րի եւ այլնի մասին, ինդիւրները լրողելու հիանալի հնարաւորու- թիւն է: Դրանք չունեն չափման որեւէ միաւոր, դրանց պարագա- յում մշտապէս հնարաւոր է յղում անել ժամանակին: Պատահական չէ, որ ՀՀԿ-ի եւ ՀՅԴ-ի յուշագ- րում այդպէս էլ չկայ ոչ մի տող թէկուզ մօտոք ժամանակացոյցի մասին: Մինչդեռ երբ երկիրը գա- հավիժում է ու պէտք է կասեցնել, պահանջուում է մեծ արագութիւն եւ կոնկրետութիւն, թէ երբ եւ ինչն է պատրաստում անել, ու ինչպէս: Որովհետեւ քաղաքակա- նութեան շարժիչները մէկը հան- րային չափիչն է, որով պէտք է գնահատուի քաղաքական ուժերի արդիւնաւէտութիւնը:

Երբ եւ ինչ արդիւնք են խոստանում ՀՀԿ-ն ու ՀՅԴ-ն, չի արժանացել յուշագրի կէս տողի անգամ: Որովհետեւ այդ տողը ենթադրելու էր ամենակարեւորը՝ պատասխանատուութիւն: ՀՀԿ-ՀՅԴ յուշագրում, ինչպէս նաեւ դրա- նից յետոյ արուող բոլոր յայտա- րարութիւններում չկայ մի բառ, որը կ'ենթադրի կոնկրետ պատաս- խանատուութիւն որեւէ կոնկրետ քայլի համար: Պատասխանատու- թեան կոնկրետութիւնը որեւէ քա- ղաքական ուժի դէմքն է: Այդ դէմքը մշտապէս ծածկում է կոսմետիկա- յով: ՀՀԿ-ն ու ՀՅԴ-ն ինտենսիւ կը զբաղուեն դրանով, որովհետեւ առա- ջիկայ տարին նախընտրական է եւ պէտք է ցոյց տալ, արտայայտել որեւէ կատարուող բան:

Այլապէս, Հայաստանում մի- ակ բանը, որ կատարում է, տնտե- սական անկումն է: Այդ անկումը միայն առաջին հայեացքից է պայ- մանաւորուած արտաքին կոնիւնկ- տուրայով կամ տնտեսական վատ քաղաքականութեամբ: Անկումը հնարաւոր է կասեցնել միայն կո- ոռուպցիայի դէմ իրական պայքա- րով: Հետեւաբար, որպէսզի իրա- պէս կատարուող միակ բանը չլինի տնտեսական անկումը, պէտք է լինի կոռուպցիայի դէմ պայքարը: Բայց Հայաստանում կոալիցիա է

Հայաստանի Ռիսկերը Թեիրան-Պաքու-Մոսկուա Գծում

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ

Իրանի արտգործնախարար- րութեան պաշտօնեան յայտարա- րել է, որ առաջիկայում սպասուում է Իրանի, Ռուսաստանի եւ Ատր- պէյճանի արտգործնախարարների հանդիպում, որի ընթացքում քննարկուելու են Իլհամ Ալիեւի եւ Հասան Ռոհանիի պայմանաւոր- ուածութիւնները՝ Ալիեւի Իրան կատարած այցի ժամանակ:

Դրանից յետոյ տեղի է ունե- ցել նաեւ երկու հեռախօսազրոյց Ալիեւ-Պուտին ֆորմատով, ինչպէս նաեւ հեռախօսազրոյց Ալիեւի եւ Ռոհանիի միջեւ: Այդ ինտենսիւ- թիւնը վկայում է, որ Ալիեւի Իրան կատարած այցի ընթացքում ձեռք են բերուել պայմանաւորուածու- թիւններ, որոնք կարելու են կող- մերի համար եւ որոնց իրականաց- ման ուղղութեամբ նրանք ձեռնա- մուխ են եղել աշխոյժ քայլերի:

Յայտնի է, որ Իրանն ու Ատրպէյճանը ստորագրել են մօտ 11 յուշագիր, այդ թւում երկա- թուղային ցանցերը մինչեւ տարե- վերջ միացնելու, նաեւ Արաքս գետի ափին երկու ՀէԿ-երի շինա- րարութիւնը շարունակելու մա- սին: Սա հետաքրքիր է նրանով, որ ստրպէյճանական մամուլը դե- ուես 2009 թուականին այդ ՀէԿ- րի շինարարութեան մասին ձեռք բերած իրան-ատրպէյճանական պայմանաւորուածութեան շրջա- նակում գրել էր, որ դրանք գտնուում են հայերի «օկուպաց- րած» տարածքներում:

Այսինքն, փաստօրէն, 2009 թուականից Իրանն ու Ատրպէյճա- նը ձեռք են բերել պայմանաւոր- ուածութիւն, որ կառուցում են երկու ՀէԿ, բայց այդ պայմանա- կորուածութիւնը վերաբերում է մի տարածքի, որի վրա Պաքուն չունի վերահսկողութիւն՝ դրանք Արցախի պատերազմի ընթացքում ազատագրուած տարածքներն են, որոնք Արցախի հանրապետու- թեան սահմանադրութեամբ ճա- նաչուում են ԱՀ տարածք:

Ալիեւի օրերս Իրան կատա- րած այցի ընթացքում, ինչպէս տարածեցին ստրպէյճանական լրատուամիջոցները, կողմերը պայ- մանաւորուել են, որ Իրանը կը շարունակի ՀէԿ-երի շինարարու- թիւնը, «մինչեւ Ատրպէյճանի տարածքային ամբողջութեան վե- րականգնումը»:

Կարող է արդեօք Իրան- Ռուսաստան-Ատրպէյճան շփումը եւ Ալիեւ-Ռոհանի պայմանաւոր- ուածութիւնների քննարկումը նե- րառել այդ հարցը, թէ՞ խօսքը վերաբերում է միայն երկաթուղա- յին ցանցին, որով կը ձեւաւորուի Իրան-Ատրպէյճան-Ռուսաստան ուղ- դու թիւնը: Կամ, գուցէ Մոսկուան ունի Իրան-ատրպէյճանական տնտե- սական այլ պայմանաւորուածու- թիւնների շուրջ հետաքրքրութիւն- ներ, ինչն էլ ստիպել է ինտենսիւ ներգրաւուել շփումների մէջ:

Բայց, անգամ այդ դէպքում, հարց է առաջանում, թէ արդեօք Մոսկուան տնտեսական այլ հե-

կազմում, որը հայաստանեան ներ- քաղաքական աւանդոյթների ոչ մեծ պատուութեան, բայց արդէն հա- րուստ փորձի բերումով գործնա- կանում հաւասարազօր է քաղաքա- կան կոռուպցիայի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

տաքրքրութիւններում շահեկան պայմաններ ստանալու դիմաց Պաքուի մօտ չի ստանձնի «Ատր- պէյճանի տարածքային ամբողջու- թիւնը վերականգնելու» պարտա- կորութիւն, հասնելու այն բանին, որ մասնաւորապէս Իրանի հետ կառուցուող ՀէԿ-երի մասում հաս- տատուի ստրպէյճանական վե- րահսկողութիւն:

Դժուար է ասել, թէ ինչ օրակարգ կայ Իրան-Ռուսաստան- Ատրպէյճան եռաչափ ֆորմատում: Ընդհանրապէս դժուար է ասել, թէ արդեօք կայ հիմք այդ շփումները ֆորմատ կոչելու: Վերջին հա- շուով բացառուած չէ, որ շփում- ները պայմանաւորուած լինեն ոչ թէ փոխադարձ շահագրգռու- թեամբ, այլ մտահոգութիւններով եւ անցանկալի հեռանկարներով:

Բոլոր դէպքերում, ակնյայտ է, որ Իրան-Ռուսաստան-Ատրպէյ- ճան շփումները չեն կարող չջօշա- փել Հայաստանի համար առանց- քային ինդիւրներ ու ռազմավա- րական շահեր: Հարցն այստեղ այն չէ, որ ձեւաւորուում է Հիւսիս- հարաւ երկաթուղային կամ տրանս- պորտային առանցք: Վերջին հա- շուով, այստեղ Հայաստանի պարա- գայում օբիեկտիւ ինդիւրները բա- ւական շատ էին: Հայաստանի դէպ- քում պէտք է կառուցուի գործ- նականում լիովին նոր երկաթուղի, միաժամանակ կայ Աբխազիայի եր- կաթուղու՝ ռուս-վրացական թնձու- կը, որը կարծես թէ չունի մօտա- լուտ լուծման որեւէ նախադրեալ:

Տուեալ պարագայում Հայաս- տանի ռիսկերը թերեւս ոչ այն- քան տնտեսական են, որքան ռազ- մա-քաղաքական: Եթէ խօսքը

Շարք էջ 18

Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՍԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ ՎԱԴԵ ԱՋԱՊԱՅԼԱՆ MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժամկետը Լրացել է, Բայց Ընտրական Օրենսգրքի Նախագիծը Աժ Չի Ներկայացուել

Հելսինքեան քաղաքացիական ասամբլիայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցի խօսքով՝ Սերժ Սարգսեանն իր իսկ հրամանագրով սահմանուած ժամկետներուն հետամուտ չի լինում. - «Սահմանադրական նորմերը չեն պահպանուած, ուր մնաց թէ մենք հիմա խօսենք հրամանագրով սահմանուած ժամկետների պահպանման կամ չպահպանման հարցի մասին: Ուղղակի հերթական անգամ արձանագրում ենք, որ իրական նորմերի նկատմամբ անպատասխանատու վերաբերմունք է դրսևորուած»:

Հանրապետական վահամ Բաղդասարեանին լրագրողներն չիշեցրել են Ընտրական օրենսգրքի նախագիծը խորհրդարան ներկայացնելու վերջնաժամկետի մասին: Պատգամաւորն արձագանքել է՝ «Երկու օրուայ համար, եթէ կան տենց պատժամիջոցներ, կարող էք կիրառել»:

Ազգային ժողովի պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Յովհաննէս Սահակեանը (ՀՀԿ) պարզաբանեց ուշացման պատճառը՝ կառավարութեան հեղինակած նախագիծը նախ պէտք է հաստատի գործադիրը - «Առաջիկայ նիստը, կարծես թէ, Մարտի 3-ին է: Ամենայն հաւանականութեամբ, այդ նիստով կը հաստատուի եւ կը գայ Ազգային ժողով: Մէկ-երկու օրը պարզ է, հրամանագիր է, բայց նաեւ հաշուի առնենք, որ կառավարութեան նիստը ամսի 3-ին է»:

Հարցին, թէ արդեօք ձգձգումը պայմանաւորուած է նախագիծը վենետիկի յանձնաժողով ուղարկելով, Սահակեանն արձագանքեց. - «Պէտք է այդ հարցադրումը ուղղէք կառավարութեանը»:

Ի պատասխան դիտարկմանը, թէ նոր Ընտրական օրենսգրքի նախագծի մշակմանը ընդդիմադիրներին ու հասարակական կազմակերպութիւններին ներկայացուցիչներին մասնակից չդարձրին, Սահակեանը խոստացաւ, որ նախագծի քննարկումից յետոյ, մինչեւ առաջին ընթերցում ընկած ժամանակահատուածում իր ղեկավարած յանձնաժողովը կազմակերպելու է լսումներ ու քննարկումներ, որոնց ժամանակ ընդդիմադիր ուժերը կարող են ներկայացնել իրենց առաջարկները. - «Եթէ

ունեն մօտեցումները, դրանք կարող են շատ հեշտ ներկայացնել, երբ որ [նախագիծը] կը գայ Ազգային ժողով: Այն աղմուկը, որը փորձում են բարձրացնել, դա այնքան էլ ճիշդ չէ եւ ազնիւ չէ»:

Ընդդիմադիրների գլխաւոր պահանջներից մէկը ընտրութիւններին մասնակցածների ցուցակներին հրապարակումն է: Օրեր առաջ Հայ Ազգային կոնգրեսը դիմեց քաղաքական ուժերին եւ քաղաքացիական նախաձեռնութիւններին՝ Ընտրական օրենսգրքի շուրջ համատեղ առաջարկներ ներկայացնելու կոչով: Խորհրդարանական ընդդիմութիւնը սկզբունքօրէն դէմ է միասնական ճակատ ստեղծելուն:

Իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչ Յովհաննէս Սահակեանը, սակայն, չյստակեցրեց՝ ցուցակների հրապարակման պահանջը նախագծում հաշուի առնուելու է, թէ՞ ոչ. - «Եթէ ունեն այս կամ այն տեղամասում որեւէ հիմնաւոր կասկած, որ այնտեղ եղել են ընտրախախտումներ, շատ պարզ կարող է յանձնաժողովի իրենց անդամը կամ վստահուած անձը ընդամէնը պարզ հայերէնով երկու-երեք տող շարադրի, բողոքարկի այդ տեղամասի քուէարկութիւնները, եւ այդ ցուցակները ձեր, մեր, բոլորի համար կը դառնան հրապարակային, կը դառնան տեսանելի բոլորի համար»:

Արթուր Սաքունցը մեծ յոյսեր չունի, թէ հաշուի կ'առնուեն ընտրախախտումները կանխարգելելու ուղղութեամբ քաղաքացիական հասարակութեան առաջարկութիւնները. - «Հիմնական խնդիրը, որ նախագծի իրական հեղինակը՝ Սերժ Սարգսեանը պէտք է լուծի, դա կայուն քաղաքական մեծամասնութեան յստակ ձեւակերպումն է, որպէսզի կարողանայ ինքը ունենայ կայուն քաղաքական մեծամասնութեան ձեւաւորման կառավարելի մեխանիզմ: Եւ երկրորդը՝ ռեյտինգաւորուած քուէարկութիւնը, որում կարեւոր տեղ եւ դեր կը շարունակեն ունենալ ներկայիս օլիգարխները, որովհետեւ իրենք են փաստացի ֆինանսական, քրէական, տնտեսական, նաեւ վարչական ռեսուրսները տիրապետում, որի հետեւանքները մենք տեսանք նաեւ հանրաքուէի խայտառակութիւններին ժամանակ»:

«Էսօր Օսկանեաններն Ու Քոչարեանները Նորից Յայտ Են Ներկայացնում Քաղաքական Դաշտ Մտնելու». Արամ Սարգսեան

«ԱՐԱՒՕՏ», - «Էսօր գալիս կեղծաւորի նման ծաղկեպսակներ են դնում էդ նոյն Բարգաւաճները, ՕԵԿ-ները Դաշնակներն ու չգիտեմինչերը, որոնք ուղղակի արդարացրեցին էդ սպանողով իշխանութիւն պահելը, ամո՛թ է: Էսօր վարդան Օսկանեանները եւ Ռոբերտ Քոչարեանները նորից յայտ են ներկայացնում քաղաքական դաշտ մտնելու ու իշխանութեան գալու, դա անթույլատրելի է», - Մարտի 1-ի գոհերի յիշատակին յարգանքի տուրք մատուցեց «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը եւ իր դժգոհութիւնը յայտնեց, երբ տեսաւ ԲՀԿ անդամներին՝ Նաիրա Զոհրաբեանին, Միասնիկեանի արձանի մօտ ծաղիկներ դնելիս: Մենք ճշդեցինք՝ ո՞րն էք համարում այդ յայտը, որը ներկայացրել է Քոչարեանը՝ նորից վերադառնալու, այսինքն ի՞նչ են արել, այն, որ հարցադրոյցներով Քոչարեանը ժամանակ առ ժամանակ քննադատում է Սերժ Սարգսեանի իշխանութեանը, համեմատութիւններ է անում, դա՞ էք յայտ համարում, թէ՞ աւելի ոչալ քայլեր էք նկատել՝ Արամ Սարգսեանը պատասխանեց. «Այն մարդը, ով Մարտի 1-ից յետոյ քաղաքական բոլոր շրջանակներում՝ արտաքին քաղաքական, համոզում էր, որ դա պարտադրուած քայլ էր, ու դա պէտք



«Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան

էր անել, հասարակութիւնը դուրս էր եկել վերահսկողութիւնից եւ ամբողջութեամբ պետական չեղաշրջման վրայ է, այդ մարդն այսօր քաղաքական կուսակցութիւն է ուզում ստեղծել, խօսում է երկրում եղած վատ իրավիճակից եւ այդ կուսակցութեան համար անդամներ է հաւաքագրում՝ դա յստակ յայտ է: Ով է այդ մարդու հետեւում՝ դա իմ ենթադրութիւնն է, եւ կարծում եմ, իմ ենթադրութեան առումով ես բացարձակ օրիգինալ չեմ: Հասարակութեան եւ լրատուական դաշտի 99.9 տոկոսը վարդան Օսկանեանի հետեւում տեսնում է Ռոբերտ Քոչարեանին, ու այնտեղ ապացուցելու որեւէ խնդիր չունեմ»:

Քաղհասարակութիւնը Չի Հաւատում ՀՀԿ-ի Եւ ՀՅԴ-ի՝ կոռուպցիայի Դէմ Պայքարի Խոստմանը

Քաղաքացիական հասարակութիւնը «Իմիտացիա» է որակում Դաշնակցութեան եւ Հանրապետականի համաձայնագիրը, որով նրանք խոստանում են պայքարել կոռուպցիայի դէմ, աւելին՝ տարանջատել բիզնեսը իշխանութիւնից: Երեւանի մամուլի ակումբի ղեկավար Բորիս Նաւասարդեանն ընդգծում է՝ իշխող Հանրապետականին են պատկանում գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւնը, եւ նրան ունէ մէկը առայսօր չէր խանգարում պայքարել կոռուպցիայի դէմ: Հետեւաբար այս նախաձեռնութիւնը, ըստ Նաւասարդեանի, երկու նպատակ է հետապնդում՝ միջազգային կառուցներին գուժարներ ձեռք բերել եւ երկրորդ՝ կոռուպցիայի դէմ պայքարն օգտագործել ներիշխանական հարցեր լուծելու համար: «Անհրաժեշտ է, որ հնարաւորինս շատ յայտարարութիւններ եւ նախաձեռնութիւններ լինեն՝ նոյնիսկ իմիտացիոն բնոյթի, որ-

պէսզի միջազգային աջակցութիւնը Հայաստանին ապահովուի: Եւ երկրորդ՝ քանի որ մենք շատ լաւ հասկանում ենք, որ մինչեւ 2017 թուականը նոյն իշխող կուսակցութեան մօտ այդ խնդիրները եւ հակասութիւնները խորանալու են տարբեր խմբաւորումների մէջ, ապա մէկ խմբաւորումը միւսի դէմ կարող է դա օգտագործել: Դա իրականում կոռուպցիայի մակարդակի վրայ չի ազդելու, կարող է նոյնիսկ հակառակ էֆեկտը ունենալ», - ասաց Նաւասարդեանը:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի իրաւախորհրդատու Հերիքնազ Տիգրանեանը նշում է՝ եթէ իշխող Հանրապետականը իսկապէս ցանկանում էր պայքարել կոռուպցիայի դէմ եւ տարանջատել բիզնեսը իշխանութիւնից, ապա դա առանց Դաշնակցութեան էլ կարող էր անել: Իսկ Դաշնակցութիւնը այն ամենակարող ուժն է, որին կը յաջողուի ստիպել Հանրապետականին փոխել վարքագիծը:

Մարտի 1-ից Յետոյ 145 Քաղբանտարկեալ Ե Եղել, Արամ Մանուկեանը՝ Արմէն Ռուստամեանին

Աժ ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեանի յայտարարութիւնը, թէ իրենցից յետոյ Հայաստանում քաղբանտարկեալներ չեն եղել, անլուրջ է եւ անհիմն: Փետրուարի 29-ին, լրագրողների հետ հանդիպմանը նման կարծիք յայտնեց Աժ ՀԱԿ խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանը: «Դա ազնիւ չէ այն քաղբանտարկեալների նկատմամբ, որոնք տարիներ շարունակ բանտարկուած են եղել: «Մարտի 1»-ից յետոյ 145 քաղբանտարկեալ ենք ունեցել,

որոնք այսօր շարունակում են պայքարել միջազգային ատենաներում: Քաղբանտարկեալներ այսօր էլ կան, իրենց նկատմամբ էլ ազնիւ չէ», - ասաց Արամ Մանուկեանը:

Յիշեցնենք, որ փետրուարի 26-ին Ազգային ժողովի ճեպագրոյցների ժամանակ ՀՅԴ խմբակցութեան ղեկավարը յայտարարել էր, որ Հայաստանում այսօր քաղբանտարկեալներ չկան, վերջինն իրենց կուսակցութեան անդամներն են եղել, որոնք բանտարկուել են Լեւոն Տէր-Պետրոսեանի իշխանութեան տարիներին:

«Ի՞նչ Կարելի Ե անել, Որ Ոչ Թէ Զենքով Հարցերը Լուծուեն, Այլ Քուէաթերթիկով».

Լեւոն Զուրաբեան

Հայաստանում կայ տեսակէտ, որ այս իշխանութիւններից ազատուելու միակ հնարաւորութիւնն ասհաբեկչութիւնն է, եւ այդ տեսակէտն արմատականանում: Այս մասին, ֆետրուարի 29-ին, Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ հանրային քննարկման ժամանակ նշել է ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

«Մենք այստեղ քննարկելու ենք, թէ, այնուամենայնիւ, ինչ-որ բան կարելի՞ է անել, որ ոչ թէ զէնքով հարցերը լուծուեն, այլ քուէաթերթիկով, մենք փորձում ենք երկիրը փրկել ասհաբեկչութիւնից», - ասել է նա:

Զուրաբեանը նկատել է, որ իշխանութիւններն այլեւս չեն էլ հակադարձում յայտարարութիւններին, թէ հանրաքուէն կեղծուած

է, որովհետեւ իրենք էլ են հասկանում, թէ ծիծաղելի կը լինի, որ հակադարձեն:

Լեւոն Զուրաբեանի խօսքով, հանրաքուէից յետոյ երկրում իրավիճակ է փոխուել: «Հանրաքուէն իր բոլոր այս կեղծիքներով, ըստ էութեան, մեծ դրական դեր է խաղացել մեր կեանքում: Կայացաւ մի մոդել, որ բոլորը տեսան, թէ ինչպէս ժողովուրդը զանգուածաբար գնաց քուէարկեց եւ յայտարարուեց բացարձակ այլ արդիւնք», - ընդգծել է Զուրաբեանը՝ յաւելելով, որ իրենք առաջարկում են մաքրել ընտրողների ցուցակները, նաեւ հրապարակել ընտրութիւններին մասնակցած ընտրողների ցուցակները, ինչպէս նաեւ տեսախցիկներ տեղադրել ընտրատեղամասերում:

ԼՈՒՐԵՐ

«Foreign Affairs». Երեւանը ձգտում է ԵՏՄ Մասնակցութիւնը Հաւասարակշռել Թեւրանի Հետ Առեւտրական Կապերի Ընդլայնմամբ

Հայաստանը, որը Եւրասիական Տնտեսական Միութեան մաս է կազմում, ձգտում է իրանի հետ առեւտրական կապերի ընդլայնմամբ հաւասարակշռել իր մասնակցութիւնը բլոկին, որում Մոսկուան տիրապետող դիրք ունի: Իլան Բերմանն այդ մասին գրում է «The Foreign Affairs» պարբերականում հրատարակուած յօդուածում:

Հեղինակի խօսքով, ինչպէս եւ սպասուում էր, անցեալ տարուայ ամբարն պատժամիջոցների վերացումն արդէն տնտեսական խթան է դառնում իրանի համար: «Համաձայնագիրը (պաշտօնական անուանումը՝ Գործողութիւնների համատեղ համընդգրկուն պլան (Joint Comprehensive Plan of Action) երկիրը կանգնեցրել է ազգային ամուր վերականգնման ուղու վրայ: Բայց համաձայնագիրն աւելի մեծ բանի է հանգեցրել: Քանի որ իրանի տնտեսական հորիզոններն ընդլայնուել են, մեծացել են նաեւ երկրի գլոբալ հաւակնութիւնները», - ասուած է յօդուածում:

Թեհրանը, որը տարածաշրջանը դիտարկում է որպէս միջազգային բեւեռացման դէմ պատնէշ, երկար ժամանակ այսպէս կոչուած յետխորհրդային տարածքում աւելի մեծ դերի էր ձգտում: «Երկար տարիների ընթացքում իրանի որպէս վտարեալի միջազգային կարգավիճակը եւ նահանգների ու Եւրոպայի տեսանկիւնից սխալ կողմում յայտնուելու՝ տարածաշրջանի երկրների վախը սահմանափակում էր:

Թուրքիայի Դպրոցներում Այլեւս Հայերին Չեն «Կողաւորի»

Թուրքիայի կրթութեան նախարարութեանը պատկանող բոլոր տիպի հաստատութիւններից ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներին «կողերը» հանուել են:

Ինչպէս տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակօս»-ը, քրդական «Ժողովուրդների Դեմոկրատական» կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլանը երկրի ՆԳ նախարարից հետաքրքրուել էր, թէ որքանով են ստոյգ, որ

կրում էին իրանի տարածաշրջանային շփումները: Բայց այժմ, միջազգային պատժամիջոցներից ազատուելով, իրանը թարմ հնարաւորութիւններ է յայտնաբերում», - նշում է հեղինակը:

Իլան Բերմանի համոզմամբ, երկիրը տնտեսական տեսանկիւնից խորապէս ներթափանցում է տարածաշրջանային շուկաներ: «Որպէս գործադրող ջանքերի մաս, իրանը վերջին շաբաթների ընթացքում Հարաւային Կովկասի բոլոր երեք հանրապետութիւններին (Հայաստան, Ատրպէյճան, Վրաստան) հետ թարմ դիւանագիտական բանակցութիւններ է սկսել այն էներգետիկ պլանների վերաբերեալ, որոնք Թեհրանին տարածաշրջանային պոտենցիալ խողովակաշարերում առանցքային խաղացող են դարձնում: Այդ բանակցութիւններն արդէն արդիւնք են տալիս: Իրանը եւ Ատրպէյճանը այս ամսուայ վերջին տնտեսական համագործակցութեան նոր համաձայնագրերի ստորագրման ճանապարհին են: Հայաստանը եւս նպատակաւորուած է դէպի իրանի հետ շփումների ընդլայնում», - նշուած է յօդուածում: Այդ տեղաշարժերը, յաւելում է հեղինակը, արտացոլում են Հարաւային Կովկասում ստեղծուող փոխհամաձայնութիւնը այն մտքի շուրջ, որ մեկուսացումից դուրս եկած իրանը կարող է տարածաշրջանի երկրների թօշնած տնտեսութիւնների համար տնտեսական կենսական զարկերակի վերածուել:

դպրոցներում այլեւս չի գործում ազգային փոքրամասնութիւններին «կողերով» նշելու պրակտիկան, ինչին ի պատասխան, նախարարը պնդել էր, թէ այն ամբողջովին վերացուել է:

Նշում է, որ 90 տարի կիրառուած այդ պրակտիկան հանուել է նաեւ անձնագրային վարչութիւնից: Կարօ Փայլանը թեմայի հետ կապուած շեշտել է, որ պէտք է «կողերի» կիրառումը հանուել պետական բոլոր կառուցներից:

Ատամ Շիֆ Սումկայիթի Ջարդերու Մասին

Շարունակուած էջ 1-էն

ծանքները յանգեցուցին Ատրպէյճանի երբեմնի ծաղկող հայութեան՝ մօտ 450 հազար հայ բնակչութեան ոչնչացման եւ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան դէմ սկսած պատերազմի սրման», - շեշտեց Ադամ Շիֆ:

Գոնկրէսականի խօսքով՝ Սումկայիթի մէջ հայերու նկատմամբ յարձակումները առաջնորդեցին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան: «Եւ այսօր Ատրպէյճանի վտանգաւոր վարքը կը սպառնայ տարածաշրջանի խաղաղութեանն ու կայունութեան: Շփման գծի վրայ ռետանային եւ դիպլոմատիկ հարաւոր կրակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բնակչութեան առօրեայ կեանքի մէկ մասն է: Ես եւս Միսսիսի

կումբին կոչ ըրած եմ նպատակը՝ իրավիճակի լարուածութեան թուլացման համար եւ ճնշում գործադրելու Ատրպէյճանի վրայ, որպէսզի վերջինս համաձայնի սահմանին մնալուն դիտարկման սարքեր տեղադրելուն», - ընդգծեց գոնկրէսականը:

«Այս տարուայ Ապրիլին կ'ամբողջանայ Հայոց ցեղասպանութեան 101-րդ ամեակը: Մենք չպէտք է թոյլ տանք, որ նման յանցագործութիւնները չճանաչուած մնան՝ անկախ այն բանէն, թէ անոնք եղած են երէկ, 28 թէ 100 տարի առաջ: Այսօր եկէք յարգենք Սումկայիթեան դաժան ջարդերու զոհերու յիշատակը: Մեր բարոյական պարտքն է դատապարտել ստեղծութեան վրայ հիմնուած բոլոր յանցագործութիւնները եւ չիշել անոնց զոհերը՝ յուսալով, որ պատմութիւնը չի կը կրկնուի», - եզրափակեց գոնկրէսական Ատամ Շիֆ:

Սիրիահայերը Լքում են Հայաստանը

Վերջին օրերուն երկու տասնեակ սիրիահայեր եւս լքեցին Հայաստանը եւ ուղեւորուեցն Գանատա՝ այնտեղ գործող «Հայ Տուն» կազմակերպութեան աջակցութեամբ: Կազմակերպութեան կայքի համաձայն՝ 2014-ից սկսած արդէն Գանատա է տեղափոխուել աւելի քան 500 սիրիահայ: «Զուարթնոց» օդանաւակայանի սպասարհում հաւաքուած սիրիահայերը խուսափում էին տեսախցիկի առջեւ բացատրել, թէ ինչու են կրկին հեռանում հայրենիքից: Սիրիական պատերազմի սկզբում Հայէպից Հայաստան եկած Յարութիւն Փալուլեանը երկու օր առաջ էր Երեւանում ամուսնացել, սակայն իր նոր ընտանիքի ապագան հայրենիքի հետ չի կապում: Ապրուստը թանկ է, աշխատավարձը չի բաւականացնում:

Օտար Մոնրեալում Յարութիւնի նորաստեղծ ընտանիքին արդէն սպասում են: Խոստացել են նաեւ աշխատանք գտնել:

«Ազատութեան» հետ զրոյցում սիրիահայերն ասում են, որ Գանատա մեկնելու համար անհրաժեշտ պայման է տեղում երաշխաւոր ունենալը, ով բնակարան կը գտնի եւ կ'աջակցի, մինչ իրենք աշխատանք կը գտնեն: «Մոնրեալ ենք գնում, պէտք է որ աշխատանք ճարենք, լիքը բարեկամներ ունենք: Իրենք էլ են հասել այնտեղ, նենց չի, որ մենք առաջինն ենք: Հոսքը շատ-շատ է, երեւում է», - ասում է Յարութիւնը՝ ցոյց տալով Գանատա մեկնող սիրիահայերի շարքը:

Հայաստան գալուց կարճ ժամանակ անց «Հայկական ծրագրեր» ընկերութիւնում աշխատանք գտած Յարութիւնը փորձել է ինքն էլ նպաստել, որ երկրում փոփոխութիւններ լինեն: Բազմիցս բողոքի ցոյցերի է մասնակցել: Անցած երեքուկէս տարիներին, սա-

կայն, հիասթափուել է: «Փողի խնդիր չի ստեղ, այլ ապրելակերպի, մի հատ 888 համարով ավտոն վրէժը քշում է, չես կարող խօսել, կամ՝ Լիսկայի 777 համարով ավտոն անցնում է վրայովդ, չես կարող խօսել», - ասում է Յարութիւնը:

Պետրոս Քիրազեանը որդուն ճանապարհ էր դնում յաջողութեան հասնելու ակնկալիքով՝ «Էստեղ հագիւ վարձ ես տալիս, էստեղ գոնէ կը յաջողի»: Որդին՝ 27-ամեայ Սարգիսը մասնագիտութեամբ խառատ է, ասում է, որ անցած երեք տարիներին Հայաստանում այդպէս էլ չկարողացաւ յաջողութեան հասնել:

Գանատայում իրեն սպասող ծանօթներն են ասել, որ առաջիկայ օրերին արդէն կարող է աշխատանքի անցնել: «3 տարի 7 ամիս է էստեղ եմ, չեմ կարա առաջ գնամ, տեղ հասնեմ, սեփականութիւն վերցնեմ, մի բան անեմ: Ես չեմ կարա ընտանիք կազմեմ Հայաստանի մէջ: Աշխատանք չկայ, ասում են՝ դուք ակցենտ ունէք, ռուսերէն չգիտէք, չենք կարա աշխատացնենք ձեզ, ինչ-որ խնդիր կայ ստեղ երկրի մէջ: Էսօր մի ապրանք եթէ ես ներմուծեմ, օրինակ, ինքնարժէքը նստում է իմ վրայ 15,000 դրամ, իսկ ուրիշ տեղեր էդ վաճառուում է 14, 000 դրամով, էդ ո՞նց կարող է տենց լինի. անօրինական ինչ-որ բաներ կայ», - տարակուսում է սիրիահայ երիտասարդը:

Կնոջ եւ երկու երեխաների հետ մեկնելու իր հերթին սպասող Ալէքսան Գուլումճեանը եւս արհեստաւոր է: Չնայած դեռ աշխատանք չի գտել Գանատայում, բայց վստահ է՝ ծանօթները կօգնեն այդ հարցում: «Ոնց եկանք Հայաստան, չէինք իմանում ինչ էինք անելու, հիմա որ երեք տարի ապրեցանք, տեսանք ինչը ոնց է, դժբախտաբար...»:

Հարկային Օրէնագիրքը Չպէտք է Պետութեան Բեռը Փոխանցի Բիզնեսին

Հարկային օրէնագիրքը չպէտք է ծանրաբեռնուածութիւնը պետութիւնից փոխանցի բիզնեսի եւ քաղաքացիների ուսերին: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարեց Հայաստանի Գործառնութեան հանրապետական Միութեան գործադիր տնօրէն Գագիկ Մակարեանը:

Պատասխանելով աշխատակիցների կողմից իրենց եկամտահարկի ինքնուրոյն հաշուարկման անցման շուրջ Միութեան կարծիքի մասին հարցին, ինչպէս առաջարկուում է օրէնագրի նախագծում,

Մարտ 1-ի Սպանդի 8-րդ Տարելիցը

Շարունակուած էջ 1-էն

բուէն եւ իւրացնել իշխանութիւնը»: Ընդդիմադիրները պահանջեցին անյապաղ ազատ արձակել Գէորգ Սաֆարեանին եւ միւս բոլոր քաղաքական բանտարկեալներուն: «Մարտիմէկեան ոճրագործութեան կրկնութիւնը հնարաւոր է բացառել եւ բռնապետութեան դէմ պայքարը յաջողել միայն ռեժիմի հեռացմանն ուղղուած՝ ժողովրդա-

Մակարեանը նշեց. «Դրական եմ վերաբերում այն ամէնին, ինչը կը բարձրացնի աշխատանքի յարմարաւէտութիւնն ու կը կրճատի վարչարարական ծախսերը: Բայց եթէ պետութիւնը պարզապէս ցանկանում է հաշուաւման բեռը փոխանցել բիզնեսին կամ քաղաքացիներին, համաձայն չեմ»:

Նրա խօսքով, հարկաւոր է վստահ լինել, որ թղթի վրայ գրուածն իրականութեան հետ անհամապատասխանութեամբ չի ունենայ, ինչպէս դա բազմիցս պատահել է պրակտիկայում:



ԼՈՍ ԱՆՃԵԼՐՍԻ ԶԱՅՈՒՔԻՆԸ ԿՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՄԻԱՏՆԱԲԱՐ ՈԳԵԿՈՇԷԼՈՒ ՉԱՅՈԳ ՑԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ 101ԱՄԵԱԿՐ



ԼՈՍ ԱՆՃԵԼՐՍ.- Լոս Անճելըսի հայուքինը, անգամ մը եւս ի մի գալով՝ որոշած է Հայոց Ցեղասպանութեան արդար հատուցումը ստանալու համար ազդու պահանջ մը ներկայացնել: Արդարեւ, Կիրակի, Ապրիլ 24ին, կ.ե. Ժամը 1ին, Լոս Անճելըսի Ուիլշիր պողոտային վրայ (6300 Wilshire Boulevard) գտնուող Թուրքիոյ հիւպատոսարանին առջեւ տեղի պիտի ունենայ Արդարութեան հանրահաւաքը՝ ոգեկոչելու համար Հայոց Ցեղասպանութեան 101ամեակը եւ դատապարտելու անոր ուրացումը:

Համայնքի գլխաւոր կրօնական, քաղաքական, երիտասարդական եւ այլ կազմակերպութիւններ դարձնելու համախմբուած ու Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին Լոս Անճելըսը ցնցած 166,000 հոգիներէն անմասն թողնելու ֆայլարշաւին ոգիով փառաբանուած՝ կոչ կ'ընեն համայնքին, որ իր ամբողջական զօրակցութիւնը ցուցաբերէ միասնականութեան ոգին ամբողջով ընդունելու ֆայլերով՝ աջակցելով այս նպատակով կազմուած Հայոց Ցեղասպանութեան յանձնախումբին:

Հակառակ այն իրողութեան, որ այս տարի Կիրակի օրուան գուգադիպող հաւաքին ընթացքին խնդրումը նուազ պիտի ըլլայ, Հարաւային Գալիֆորնիոյ տարբեր շրջաններու եկեղեցիներէն, վարժարաններէն եւ համայնքային կեդրոններէն տրամադրելի պիտի ըլլայ հանրակառքով փոխադրութիւն: Ամբողջական ցանկը պիտի հրատարակուի մօտիկ ապագային:

Ցոյցին համար յատուկ շապիկներ արդէն իսկ կը ծախուին Կլեմտէյի, Հոլիվուտի եւ Վելի Վիլքսի «Ձոնգ» խանութներուն մէջ, ինչպէս նաեւ՝ Amazon.com եւ Ebay.com կայքերուն վրայ: Շապիկներու վաճառքէն գոյացած գումարը ամբողջութեամբ պիտի տրամադրուի հանրահաւաքի ծախսերուն: Հայոց Ցեղասպանութեան յանձնախումբը կոչ կ'ընէ հայորդիներուն, որ այդ շապիկները գնելով եւ հագուելով՝ ֆայլարշաւին համար ֆարոցութիւն կատարեն:

Յանկելու տեղեկութիւններ պիտի հրատարակուին յառաջիկային:

ՀԱՅՈՑ ԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Հիւսիսային Ամերիկայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմ; Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմ; Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Եկեղեցի; Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւն; Հայ Ցեղափոխական Դաշնակցութիւն; Ռամկավար Ազատական Կուսակցութիւն; Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն; Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Միացեալ Նահանգներու Արեւմտեան Միութեան; Հայ Օգնութեան Միութեան Միացեալ Նահանգներու Արեւմտեան Միութեան; Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն; Ամերիկայի Հայկական Համագումար; Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբ; Հայ Ամերիկեան Խորհուրդ; Հայկական Իրաւանց Խորհուրդ; Հայկական Իրաւաբանական Միութիւն; Պոլսահայ Միութիւն

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԱԾ ԵՆ ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ԶՈՐԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մոսկուայի ՀԱԵ վանական համալիրի տարածքին գտնուող յուշակոթողին մօտ ֆետրուար 28-ին տեղի ունեցած է ծաղիկեպալներու եւ ծաղիկներու զետեղման արարողութիւն՝ ի չիշատակ 1988 ֆետրուար 27-29 կատարուած սովետական ջարդերուն զոհ դարձած անմեղ հայերու:

Ռուսիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան փոխանցած տեղեկութիւններով՝ չիշատակի ձեռնարկին մասնակցած են ՌԴ-ի մէջ ՀՀ դեսպան Օլեգ Եսայեանը, ՀԱԵ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ Եգրաս արքեպիսկոպոս Ներսիսեանը, ՀԱՊԿ-ի մէջ ՀՀ

լիազօր ներկայացուցիչ Դաւիթ Վիրաբեանը, Մոսկուայի մէջ ԼՂՀ ներկայացուցիչ Ալպերթ Անդրեանն ու դեսպանութեան դիւանագիտական անձնակազմը:

Ներկաներուն ուղղուած խօսքով հանդէս եկած է ՌԴ-ի մէջ ՀՀ դեսպան Օլեգ Եսայեանը՝ ընդգծելով, որ 28 տարի առաջ ատրպէյճանական իշխանութիւններու սանձահարմամբ տեղի ունեցած զարհուրելի իրադարձութիւնները չեն մոռցուած, եւ այդ յիշողութիւնը կը փոխանցուի սերունդէ սերունդ, քանի դեռ մեղաւորներու քրէյանցական գործելակերպը չէ ստացած համապատասխան իրաւական, քաղաքական եւ բարոյական

ՍԵԻԱՆ ՆՇԱՆԵԱՆԸ ԴՈՒՐՍ ՊԻՏԻ ԵԼԼԷ ՄԵՆԱԽՈՒՑԷՆ



Պոլսահայ ազատագրկուած մտաւորական, լեզուաբան Սեւան Նշանեանը մենախուցի մէջ պահելու մասին որոշումը չեղեալ համարուած է: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը՝ վկայակոչելով թրքական Demokrat Haber.net-ը:

Դատարանը բաւարարած է Նշանեանի ներկայացուցած բողոքը՝ որոշում կայացնելով հանել կարգապահական տոյժը, որ նշանակուած էր մտաւորականի կողմէ բանտին մէջ արգիլուած համացանցի մոտեմ եւ պայթուցիկ նիւթ պահելու հիմնաւորումով:

Միաժամանակ նշուած է, թէ պոլսահայ մտաւորականը բանտին մէջ իբրեւ կաշառք 10 հազար թրքական լիրա եւ ինքնաշարժ առաջարկած է: Ի պատասխան նման մեղադրանքի՝ նիստին համացանցի միջոցով միացած Նշանեանը ըսած է, որ ինքնաշարժ չունի, որ կրնայ իբրեւ կաշառք առաջարկել:

Դատարանը վճռած է կաշառքի հարցով որոշումը յայտնել միւս դատական նիստին, որ պիտի կայանայ Մարտ 3-ին:

2016 թուականի Յունուարին լեզուանանը Սուլթանհիսարի բաց բանտէն, ուր պատիժը կը կրէր

2015 թուականի Սեպտեմբեր 24-էն ի վեր, տեղափոխուած էր նոյն բանտի փակ հատուած: Բանտի տնօրէնութիւնը որոշումը հիմնաւորած էր անով, որ մտաւորականը խախտած է բանտի կանոնները:

Աւելի ուշ Նշանեանի փաստաբանը տեղեկացուցած էր, որ իր պաշտպանեալը տեղափոխած են մենախուց: Ի դէպ, այդտեղ անցուցած օրերու քանակով Նշանեանի ազատագրկման ժամկէտը պիտի երկարաձգուի: 2014 թուականի Յունուարին՝ 11 տարի ժամկէտով՝ ազատագրկման մէջ գտնուող Սեւան Նշանեանը թուրքիոյ մէջ ձերբակալուած է անոր համար, որ օրինականօրէն իրեն պատկանող տարածքին մէջ «ապօրինի» շինարարութիւն կատարած է:

Թրքական մամուլը նախապէս յայտնած է, որ Սեւան Նշանեանի ձերբակալութիւնը իշխանութիւններու գործն է, քանի որ մտաւորականը բազմիցս հանդէս եկած էր թրքական կառավարութեան սխալներու հրապարակային քննադատութեամբ: Ան նաեւ թուրքիոյ մէջ մշտապէս բարձրաձայնած է Հայոց Ցեղասպանութեան իրողութեան մասին:

ՊՈՒՐՍԱՅԻ ԶԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԾԱԽՈՒ ԶԱՆՈՒԱԾ Է



Թուրքիայի Պուրսա քաղաքում վաճառքի է հանուել 300 տարուայ հնութիւն ունեցող եկեղեցի, որի տէրը բնակուած է արտասահմանում, իսկ վաճառքն իրականացնող միջնորդը յայտարարութեան մէջ բաւարարելու հենց այսպէս է գրել. «Վաճառուած է եկեղեցի, աննախադէպ հնարաւորութիւն, ամէն տեսակ օգտագործման յարմար է»:

Եկեղեցին գտնուած է Պուրսայի Սեթբաշը թաղամասում, որը անցեալ դարասկզբին յայտնի է եղել որպէս քաղաքի հայկական

թաղամաս: «Հաբերթիւրքի» փոխանցմամբ եկեղեցին, պաշտօնապէս գոյքագրուել է 1986 թ.-ին փաստաթղթերում գրանցուել որպէս «հասարակական-մշակութային տարածք»: Եկեղեցու երեք յարկանի շէնքը գնահատուել է 1,500,000 ԱՄՆ տոլար:

Ի դէպ անցեալ տարի ամրանը Պուրսայի Մուհամմադ շրջանում վաճառքի էր հանուել եւս մէկ եկեղեցի, որը սակայն բիւզանդական էր, վերջինս էլ գնահատուել էր շուրջ 1,000,000 տոլար:

գնահատական: Դեսպան Եսայեանը չիշեցուցած է նաեւ, որ Սովետական ժամանակի եւ Ատրպէյճանի այլ քաղաքներում մէջ սկսած վայրագութիւնները նպատակ

կը հետապնդէին կասեցնել Լեռնային Ղարաբաղի Ատրպէյճանական ԽՍՀ-ի կազմէն դուրս գալու եւ Հայկական ԽՍՀ-ին միանալու հայութեան արդարացի մղումները:

ԱՆՂՐԱՆԻԿԻ ՈՒՂԻՆ



ԱԻՅՏԻՍ ՌԱԶՄԻԿ

151 տարիներ առաջ Շապին Գարահիսար գիւղաքաղաքին մէջ կը ծնէր հայորդի մը: Ո՞վ կրնար գուշակել թէ Նախահրամանները անոր վերապահած էր եզակի ճակատագիր մը իր ժողովուրդին պատմութեան մէջ:

Անդրանիկ Օզանեան՝ պաշտօնապէս: Իսկ ժողովրդաբուն եւ պատուաբեր տիտղոսները շարան մը կրնան հիւսել՝ ժողովրդական հերոս, Սամոյ Արծիւ, Փաշա, Զօրավար, Կեներալ, Հայդուկապետ, առասպելատիպ հերոս, ֆետայապետ, հայկական Կարիպալտի, Քաջ Անդրանիկ եւ այլն:

Although there are many affinities between Armenians and Jews there are also historical and present geopolitical factors that divide them. The conference is intended not only to shed light on the modern historical affinities, but to bring students, faculty, and community members into a positive dialogue about the future. The resistance of under-armed and outnumbered civilians to the overwhelming force of totalitarian states with genocidal ideologies also raises important questions about the relation of the individual to the system; the nature of the rule of law, and of international relations; strategies for overcoming conformity, passivity, and fear; and the parameters of human moral responsibility. All of these are as immediate now as they were in the two fateful conflicts of the past century.

For more information about this program contact NAASR at 617-489-1610 or hq@naasr.org.

Armenia Commemorates 8th Anniversary

Continued from page 1

bers of the opposition also drew the attention of the visiting European Union’s foreign and security policy chief, Federica Mogherini, to “the presence of political prisoners in Armenia.”

Earlier on Tuesday, issues of political persecutions, the 2008 killings and other human rights concerns were reportedly raised by representatives of opposition political parties at meetings with Mogherini held behind closed doors.

Glendale Officials Propose Locating Armenian American Museum in City's Arts and Entertainment District



GLENDALE -- On Thursday, February 25, Glendale City Councilman Zareh Sinanyan and City Manager Scott Ochoa formally presented to the Armenian American Museum's Governing Board the option of building the Museum in Glendale's Arts and Entertainment District across from the Central Library.

The Armenian American Museum's Governing Board agreed to consider the option of placing the Museum on the proposed 1.4 acres property on Colorado Street and consult with Armenian American community organizations and representatives regarding the new site.

The Armenian American Museum is conducting environmental and economic studies to determine the feasibility of building the Museum on City owned property across from Glendale Community College. In April 2015, the City and the Armenian Genocide Centennial Committee (AGCC) of Western USA executed an Exclusive Negotiating Agreement to develop the terms of a ground lease of the site proposed for an Armenian American Museum.

The AGCC in August 2015 delegated the authority and responsibility for building the proposed museum to 9 Armenian community organizations and institutions. The Governing Board of the Armenian American Museum was established and the work on developing a concept plan and concept design continued.

By December of last year, the

Governing Board unveiled a concept design at the City Council meeting and expanded community outreach efforts to inform the public and solicit feedback on the proposal.

"We are very pleased by the outpouring of support for the Museum and look forward to engaging the City's Armenian as well as non-Armenian stakeholders in the process of building a world class Museum," remarked Armenian American Museum Governing Board Co-Chair His Eminence Archbishop Hovnan Derderian.

"The feedback indicates that there is greater support for locating the Museum in downtown Glendale. Residents who support the Museum have urged the City Council to identify property in the central part of the City where most of the arts and entertainment facilities are located," added Governing Board Co-Chair His Eminence Archbishop Moushegh Mardirossian.

"The City owned property in downtown Glendale was not an available option in 2014," remarked the Armenian American Museum executive committee chairman Berdj Karapetian, who has been spearheading the Museum project since its inception 2 years ago.

Karapetian further added that AGCC considered building the Museum in the central part of the City or its Arts and Entertainment District but could not identify an appropriate location in 2014 when it initiated the discussion for a ground lease with City officials.

Vatche & Tamar Manoukian High School Tenth Anniversary Celebration

PASADENA -- This year, the Armenian General Benevolent Union's Vatche & Tamar Manoukian High School in Pasadena, California will complete its 10th school year, continuing a strong tradition of maintaining academic excellence through a comprehensive academic program, planned with the

goal of developing fundamental scholastic skills, analytical and critical thinking, study skills and self-confidence in students to pursue college, career and life objectives. The school strives to foster student inquiry, creativity, and true love of learning in a supportive and caring school environment.

Our humble beginnings in 2006 planted the seeds of growth that has blossomed into a school that is steadfastly committed to cultivating the potential of each student-scholar in an inclusive and collaborative setting which promotes academic excellence, cultural appreciation, and ethical conduct. The four-year program graduates students who are creative as well as critical thinkers, effective communicators, lifelong learners, and capable leaders, intellectually and socially equipped to meet the challenges of the future. The school is committed to immersing our students in rigorous, standards-based college-preparatory curricula in a nurturing and supportive environment, fully preparing students for higher education and subsequent professional achievement. We instill in our students a deep and lasting appreciation for their Armenian identity, while informing our students about the fundamental ideals and outstanding accomplishments of Armenian General Benevolent Union (A.G.B.U.), which will empower them to promote and preserve Armenian culture and heritage both locally and globally. We inspire our students to become informed, responsible, and socially conscious Armenian-Americans who embrace cultural diversity and make significant leadership contributions to





humanity. The school believes that emphasis on high academic expectations, ethical and social responsibility, caring for one's physical well-being, and respect for our resources and environment will prepare well-rounded and successful community members in the future.

Our dynamic program has led our alumni to become scholars among the world's most prestigious higher institutions of learning thanks to the continuous partnership and collaboration of the dedicated visionary founders, benefactors, board, community leaders, loving families, the faculty and staff, and our beloved scholars. We especially wish to recognize the contributions of the school's founding principal, Mr. Hagop Hagopian for his commitment and dedicated service to establishing the roots of the school and his ongoing support.

Our entire community and the 10th Anniversary Gala Committee will celebrate the school's role in the community, its rigorous academic curriculum, stellar extra-curricular, technological, and visual and performing arts programs, and its exciting aspirations for the future. This will culminate in a Gala celebration to be held on Saturday, March 12, 2016 at the Palladio Banquet Hall, where all stakeholders will be attending to celebrate our collective achievements and look forward to what future decades will bring. We are confident that the community will wholeheartedly support the school as it has through the last decade as it continues on its mission and vision to prepare future generations of worthy scholars and leaders in the diaspora.

"The Martyred Armenian Writers 1915-1922: An Anthology" by Herand M. Markarian



PARAMUS, NJ – As part of the Armenian Genocide Centennial Commemorations, the Armenian Missionary Association of America (AMAA) will present Dr. Herand M. Markarian's

book, "The Martyred Armenian Writers 1915-1922: An Anthology" at the Armenian Presbyterian Church in Paramus, NJ, March 18 at 7:30 PM.

Markarian's book surveys the

lives and writings of 13 authors who perished during the Armenian Genocide, several of whom on the night of April 24, 1915, along with many other community leaders, intellectuals and clergy in Constantinople were gathered and deported, never to be seen again.

The book, organized into three parts, includes general introductions to western Armenian literature of the 19th Century and to the Armenian Genocide. The third part of the book contains short biographies of some of the most beloved Armenian writers of the era, along with a bibliography of their writings. Dr. Markarian also provides a sample of excerpts from each author, translated into English. "The development of Armenian literature is a unique phenomenon in the history of world literature," writes Markarian. "In contrast to others, it developed in

countries where the official language was not Armenian."

Herand Markarian is a scientist, professor, playwright, poet, director, actor, literary and theater critic, and translator. He was born in Basrah, Iraq. He has authored 26 plays and 13 books. He has directed 53 plays and acted in 50 others.

AMAA Executive Director/CEO, Zaven Khanjian, will make the opening remarks, followed by Dr. Markarian's PowerPoint presentation. Nick Aynilian Jr., Raffi Aynilian, Vatche Demirjian, Richard Hekemian, Anoush Kalachian, Niree Kaprielian and Melani Salibian will participate in the program by reading some of the writings of the martyred writers.

The event is free and open to the public. A reception will follow the presentation, during which books will be available for sale.

ՍՈՒՐԻԱՅԱՅԵՐՈՒ ՅԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՆ ՄԻՆՉԵՒ ՍՈՒՍԻՍ



ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Հայաստանի Հանրապետության Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ 24, Փետրուարին Երեւանի մէջ կայացաւ սուրիահայերու խնդիրներուն նուիրուած աշխատաժողով մը: Այս ժողովը կը կարեւորուէր մասնաւորապէս ՄԱԿ-ի գաղթականներու հարցերով զբաղող մարմինին՝ UNHCR-ի Հայաստանեան մարմնի եւ այս առթիւ տարբեր երկիրներէ Հայաստան ժամանած անոր մասնագէտներու ներկայութեամբ: Սփիւռքի նախարարութեան կողքին կարեւոր ներկայութիւն էին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը եւ Երեւանի մէջ գործող Հալէպահայերու երկու հասարակական կազմակերպութեանց (ՀԿ) ներկայացուցիչները: Բացման հանդիսութեան յատուկ ելոյթներով հանդէս եկան Սփիւռքի նախարար Տիկ. Հրանտ Յակոբեան, ՀՀ Աշխատանքի նախարար Արտեմ Ասատրեան, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Տնօրէն Պրն. Ռազմիկ Փանոսեան, ՀՀ Արտաքին Գործոց նախարարի տեղակալ Պրն. Աշոտ Յովակիմեան եւ ՀՀ-ի մօտ ՄԱԿ-ի մշտական համակարգող Պրն. Պրէտիլի Պուեստո:

Ուսօք առնող պատասխանատուներէն իւրաքանչիւրը, իր ոլորտին մասին խօսելէ բացի շեշտը դրաւ սուրիահայերու խնդիրներուն հարցերով մարմիններուն միջեւ առկայ համագործակցութիւնը աւելի ամուր հիմքերով վրայ դնելու վրայ: Հանդիպման ընթացքին նոյնիսկ առաջարկ եղաւ ստեղծելու յատուկ մարմին մը, որ պիտի կառավարէր ամբողջ աշխատանքը ու մասնաւոր սուրիահայերու խնդիրները ներկայացնէր եւ քննարկէր ՄԱԿ-ի գաղթականներու հարցերով զբաղող մարմիններուն մօտ: Ծուրջ տաս օր առաջ ՀՀ Սփիւռքի նախարարութիւն լրագրողներուն հետ խօսելու պահուն նշած էր, որ այսօր Հայաստանի մէջ կ'ապրին շուրջ 16 հազար սուրիահայեր: Ու այս թիւը ան- տեսելի թիւ մը է, միջազգային պատկան մարմիններուն մօտ գաղթական (կամ ապաստանեալ) սուրիահայերու անհրաժեշտ ու կարեւոր օժանդակութիւններ տրամադրելու տեսակէտէն: Տարբեր առիթներով այս նիւթը բարձրաձայնուած է տարբեր ամպիոններէ եւ շատ անգամներ այս խնդիրը համապատասխան արձագանգի է հարձանացած: Ճիշդ է, որ սուրիահայերը եկած են իրենց հայրենիքը՝ Հայաստան, բայց եւ այնպէս անոնց ապրած ողիսականը,

տնտեսական ծանր վիճակը եւ դիմագրառուած դժուարութիւնները գանոնք կը դնեն գաղթականի կամ փախստականի նոյն հարթակին վրայ: Նշեմ, որ աշխատանոցը կը կրէր «Մարդասիրական արձագանգէն դէպի կայուն լուծումներ» ընդհանուր խորագիրը եւ ամբողջ օր մը տեւած այս ժողովի ընթացքին հնչեցին մի քանի առաջարկներ, որոնք ամէն պարագայի արժանի են յատուկ շեշտադրումներու:

Կարեւոր ու շինիչ էր «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկ»-ի հայկական բաժնի տնօրէն Պրն. Ռազմիկ Փանոսեանի դիտարկումը: Փանոսեան կ'առաջարկէր սուրիահայերու խնդիրներուն մօտենալ պատրաստելով ու միջազգային մարմիններուն ներկայանալով յատուկ ծրագիրներով: Այս կարծիքին էին նաեւ ՄԱԿ-ի գաղթականներու հարցերով զբաղող միջազգային փորձագէտները: Այսինքն, եթէ գաղթականներուն համար ինչ որ նիւթական աջակցութիւն է պէտք կարեւոր էր, որ այդ նեցուկին դիմաց ներկայացուէին յատուկ եւ համակարգուած այնպիսի ծրագրեր, որոնք կը յաջողին տրամադրուած գումարները վերատին ապահովել: Այս մէքանիզմը կրնար օգտակար ըլլալ այն իմաստով, որ տրամադրուած գումարները, որպէս ողորմութիւն պիտի չտրուէին մեր հայրենակիցներուն այլ անոնք պիտի տրուէին յատուկ գործնական ծրագիրներ իրականացնելու եւ նիւթական եկամուտներ ապահովելու համար:

Կարեւոր էր նաեւ Սփիւռքի նախարար Տիկն. Հրանտ Յակոբեանի մօտեցումը: Տիկնի նախարարութեան խօսելով այսօրուան իրադրութեան մասին կը պատմէր, որ Հայաստանէն տարբեր միջոցներով Ծուրջ հասնող սուրիահայեր այսօր կը դժգոհին եւ յայտնուած են բարդ դրութեան մը մէջ: Ու այդ առումով նախարարութիւն տրամաբանական առաջարկով մը կը բացատրէր, որ այսօր Հայաստան գտնուող սուրիահայերուն նիւթական նեցուկի չափերը շատ աւելի նուազ պիտի ըլլան քան այն նիւթական գումարները, որոնց կարիքը պիտի ունենան մեր հայրենակիցները հոգալու համար իրենց ամենակենսական ծախսերը Ծուրջի, Գերմանիոյ, Գանատայի եւ այլ երկիրներու տակ: Այս բրակմաթիզմը կը կարեւորուէր ու կրնար դրական իրադրական մը ստեղծել պայմանաւ, որ դրուած գումարները տրամադրուէին իրական եւ տրամաբանական կարճաժամկէտ ծրագիրներու յաջողութեան համար: Վերջին օրերուն շատ կը խօսուի մեր հայրենակիցներու դէպի

Գանատա ապաստանելու ընթացքի մը մասին: Ու այս մասին խօսքերը բնականաբար հիմնուած են իրական եւ բաւական մտահոգիչ թիւերով վրայ: Վերջին ամիսներուն Երեւան ապրող սուրիահայեր նախ Պէյրութ կը մեկնին ու ապա կարճ միջոցի մը մէջ որոշ թղթատարական գործեր ընելէ ետք կը հասնին Մոնթրէալ եւ Թորոնթօ: Այդ քաղաքներուն մէջ անոնք ունին ազգականներ եւ իրենց հասնելէն ետք ու որոշ ժամանակի մը համար կ'ապաստանին իրենց ազգականներուն մօտ: Գանատական մէկէ աւելի պարբերականներ իրենց էջերուն վրայ լայն տեղ տուած են գաղթական-սուրիահայերու օրակարգին: Ճիշդ է, որ արեւմտեան մամուլը ամէն գնով կը փորձէ վարդագոյն երանգներով ներկայացնել Գանատան, բայց եւ այնպէս իրականութիւնը այլ է: Գոյնաւորութիւններուն հիմքը միայն լեզուն ըլլալը չեն, այլ կան շատ աւելի խորքային խնդիրներ, որոնց մասին բնականաբար սուրիահայերը պիտի չօգնեն խօսիլ: Անոնք կը նախընտրեն լուրջ: Ու այս արտահայտութիւնը դիմաց, ինչ ալ ըլլան Հայաստանի իշխանութիւններուն դրական եւ կամեցողական մօտեցումները անոնք պիտի մնան ապարդիւն: Բնական է, որ այս խնդիրին մասին արձագանգելը, բարձրաձայնելը կրնան օժանդակել, որ մեր հայրենակիցները գիտնան ճշմարտութիւնը: Անոնք պէտք է հասկնան մէկ բան, որ արեւմուտքը, Գանատան, Մոնթրէալն ու Թորոնթօն դրախտ չեն: Հոն դրախտի ծառեր ու տերեւներ չկան: Ու այդ տեղի կեանքն ու մաշտը, պիտի չօգնեն իրենց, որ մօտիկ անցեալին ձեւաւորուած ու այնքան սուտ «արեւմտեան դրախտ» դրուածքը աճի իրենց մէջ: Աճի ու մարմին դառնայ:

Անոնք դառնան բարուք ապրող քաղաքացիներ: Պահեն իրենց լեզուն եւ ապրին, որպէս լիարժէք հայեր: Եթէ նոյնիսկ շատեր աւարկեն, որ այս մօտեցումը ծայրայեղական է, երեւելի է սակայն, որ Հայաստան ապրիլը, Հայաստանի մէջ կտոր մը հաց վաստակելը շատ աւելի հեշտ է, ու շատ աւելի քիչ ճիգով մը կարելի է նաեւ այսօրուան Հայաստանի մէջ գոյատեւել ու ապրիլ: Հայաստանի երազը միայն Հալէպի ու Դամասկոսի նեղ ու խոնաւ փողոցներուն մէջ երգող երգը չէ: Առնուազն այս առումով մեր հայրենակիցները պէտք է առանց վարանումի արժեւորեն այսօրուան պատմական առիթին խորքային իմաստը:

Սուրիահայերու նուիրուած այս ժողովը կը կարեւորուէր իր լրջութեամբ եւ մասնագիտական մօտեցումներով հարցերուն մօտենալու ունակութեամբ: Ամէնէն կարեւորն այն է, որ աշխատաժողովին կը հնչէր յառաջիկայ աշխատանքները գործնական ծրագրերով հիմնաւորելու ու նաեւ ՄԱԿ-ի գաղթականներու հարցերով զբաղող մարմիններէն ամբողջական նեցուկ տրամադրելու հայկական մօտեցումը, որուն համար հայրենի իշխանութիւնները ամէն գնով պէտք է պատրաստի ծրագիրներ մշակեն: Այդ ծրագիրները պէտք է բնականաբար գործողութիւն մասնաւոր Երեւանի մէջ գործող սուրիահայերու հարցերով զբաղող ՀԿ-երու կողմէ ներկայացուած ծրագիրառաջարկներով:

Կարեւոր վերջին կէտ է նաեւ, որ սուրիահայերու խնդիրը պէտք է դառնայ նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան ամենակարեւոր օրակարգերէն մին, որովհետեւ այսօր Սուրիոյ շուրջ ընթացող բարձր մակարդակի բանակցութիւնները կը պատրաստեն նոր Միջին Արեւելքի մը առաջին եւ հիմնական բնօրինակը:

El Niño Awareness and Public Forum

Presented by
 Armenian Athletic Association Ladies Society
THURSDAY, MARCH 24, 2016
 Starting at 7:00 p.m. – 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Keynote Speaker
 Pasadena Police Chief Phillip Sanchez

FREE ADMISSION • ALL ARE WELCOME
 Refreshments will be served

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՐԱՅԱՍՏԱՆԵՆ ՑՏԵՍՈՒԹԻՒՆ՝ ԻՍԿՈՐՈՒՄՏԵ~ԱԼ ՅԱՅՐԵՆԻՔ

ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

Յուլիս 20, 2014:
Առաւօտ կանուխ պանդոկին առջեւ եռուզեռ կար: Երեւոյթ մը՝ որ շատ բնական էր այդ փողոցին համար: Մեզի համար սակայն այդ օրը տարբեր իմաստ ունէր: Վերջին քանի մը ժամերը պիտի անցնէին քան քաղաքին մէջ ուր Արեւմտահայութեան մեծերն էին ապրեր: Քանի մը ժամ ետք պիտի մեկնէին օդանավակայան՝ Լոս Անճելըս վերադառնալու:

Յուլիս 5-20 Իսթանպուլի, Կիլիկիոյ եւ Արեւմտահայաստանի տեսարժան վայրերը այցելած էինք որպէս «ուխտագնացներ»:

Տիրութիւն մը պատած էր մեր հոգիները: Տիրութիւն՝ ոչ թէ անոր համար որ մեր «պտոյտ»ը իր լրումին հասած էր, այլ հարազատէ, «տունէդ» բաժնուելու մեկամարտ-ձոտութիւնը իրորհրդանշող ցաւը: Խոնաւ էին մեր աչքերը: 15 օրերու ընթացքին սերտ բարեկամութիւններ հաստատած էինք, այսօր պիտի բաժնուէինք իրարմէ, սակայն կրնայինք նորէն հանդիպել իրարու մեր քաղաքներուն մէջ: Մեր «տիրութիւն»ը ուրիշ տեղերէ կու գար:

Մեր հոգիներուն խորը վիճակը ու կարօտ, բարկութիւն՝ կար ու ցասում, բողո՞ք կար ու ատելութիւն, վրէ՛ժ կար ու հուրը պայքարի, սուգ կար եւ աղօթք, հաւատք կար եւ յուսախաբութիւն, ցա՛ւ կար ու ցաւցնելու՝ տրամադրութիւն:

Մեր ուխտագնացութեան ճանապարհը անցած էր այն ճամբաներէն ուր մեր նախնիները տակաւին 99 տարիներ առաջ կենդանի էին եւ երազող՝ իրենց շէնշող կեանքը ապրելու: Տակաւին 99 տարիներ առաջ, կեանք կար հոն ու ծիծաղ, սէր կար հոն ու համբոյր, խունկ կար հոն ու աղօթք: Տակաւին 99 տարիներ առաջ, գիւղացին իր եզերը գործի մղած, գութանին ետեւէն իր «Հորովել»ը կ'երգեր, իր արտը կը հերկէր, կը ցանէր ու կը հնձէր: Աղջիկները մեր հեզաճկուն, կուժերը շալկած աղբիւր կ'երթային, եւ հոն՝ հայ կտրիճներուն հանդիպելով անոնց գաղտագողի նայուժքներու ետին՝ սէրն ու կիրքը կ'«աճէր տակաւ»: Միայն 99 տարիներ առաջ, մինչ հայ մայրերը թոնիրին առջեւ հաց կը թխէին, չարածիճի մանուկները վառվռուն, գիւղի փոշոտ փաղոցներուն մէջ, օղբ կը լեցնէին ճիչերովն իրենց ուրախ: Ե՞րբ էր տակաւին, երբ Կիրակի օրերուն եկեղեցիներուն մէջ մեր օրհնուած, խունկի անուշաբոյր գուլաներուն հետ մեր մամիկներուն եւ պապիկներուն աղօթքները շարականներուն պլլուած «գուլայ գուլայ» կը բարձրանային առ Աստուած:

Մենք քաղցինք այն փողոցներէն ուրկէ Զօհրապներն ու վարուժաններն էին քալեր, այն մայթերէն՝ ուրկէ Սիամանթօն եւ Հրանդ Տինկն էին քալեր, այն արահետներէն՝ ուրկէ մեր Զարթօնքի սերունդին հսկաներն էին քալեր:

Մենք ապրեցանք անթեղուած խոյանքը մեր Մեծերուն եւ ճախրանքը՝ Անոնց երազներուն:

Մենք տեսանք աւերուած երկիրը մե՛ր պապենական:

Մենք լսեցինք աղիողորմ ճիչերը մեր լիկուղ հարսերուն ու

ողբը՝ մեր մայրերուն, աղբրսանքը՝ մեր մանուկներուն ու ցասումնալից բողոքները՝ անգոր մեր հայրերուն:

Մեր ունեցելը լեցուեցան արեան բոյրովը մեր նահատակներուն ու ծուխի հոտերովն այրող մեր աղուո՞ր գիւղերուն:

Մեր ոտքերը մխրճուեցան արեան լիճերուն ու հոտող գետերուն մէջ կարմիր, տեսանք մաքուր արիւնը սուրբ՝ բիւրաւոր մեր մեռելներուն: Տեսանք դիակները մեր կոյսերուն՝ որոնք այլեւո՞ճուած Եփրատին ապաւինեցան իրենց պատիւը սուրբ փրկելու:

Մեր գիւղերու աղբիւրներու ջրնջ ջուրերուն մէջ մենք տեսանք հայ պարմանուհիներու անուշ դէմքերը հրեշտակային:

Մեր քայլերուն առթած ձայնին մէջ մենք լսեցինք ճարճատիւնը կոտորտուող ոսկորներուն մեր պաշտելի պապերուն:

Մեր աւերուած եկեղեցիներու լուռ պատերէն լսեցինք արձագանգները աղիողորմ ճիչերուն սարսափազդու՝ հոն ապաստանող

միւրոնաբոյր մանուկներուն, անմեղ մայրերուն ու մամիկներուն, երբ քարիւղով օծանուելով այրեցան անոնք՝ աղօթելով առ Աստուած, որ երբեք չեկաւ օգնելու իր Զաւակին Առաջին Հետեւորդներուն:

Եւ հոն, աւերուած պատերուն տակ մեր եկեղեցիներուն, աղօթեցինք խուլ Աստուածներուն մեր կուրցած, Եահուէին եւ Անոր Որդւոյն, հանգստութեանը համար մեր հայրերուն հոգիներուն նահատակ: Բայց աղօթքները այդ փոթորկոտ, վերջը չէին պարտականութեանց ընդ նահատակներուն մեր բարի, այլ սկիզբը՝ հրավառ պայքարին մեր Վրիժառու:

Մենք տեսանք դաշտերը մեր հայրենի, ծառն ու ծաղիկները մեր հողին, պարտէզներն ու պտուղները մեր մրգաստաններուն, բերքը բարի մեր հայրենական հողերուն՝ որոնք սակայն կը լափուէին արիւնարբու թշնամիին կողմէ մեր ոխերիմ:

Մենք տեսանք Դուռը Մհերին ժառանգած, լսեցինք զարկերն իր սրտին ամենի եւ շառաչիւնն ժանգոտած անոր շղթաներուն, բայց աւա՞ղ, ամուր էր Դուռը ժայռակերտ այդ մութ բանտին:

Ռուբինեաններուն Տան,

Հեթումեաններու Արգայական եւ Բագրատունեաց Հարստութեան բանակներուն որոտումն ու առթած փոշին՝ պլլուած էին տակաւին միտքերուն մէջ մեր ապշած:

Մենք տեսանք Լիճը Վանայ, որ իր սեւցած կապոյտին մէջ տխուր էր եւ սգաւոր: Կղզին Աղթամար եւ վանքը մեր Սբ. Խաչի, որ իր խրոխտ բարձունքէն աղբրազին մեզ կը կանչէր աղօթքի:

Աղօթելու՝ բայց Որու՞: Աղօթելու՝ բայց ինչու՞:

Մենք տեսանք Արարատը մեր Սրբազան, իր բարկութեան մէջ ժայռացած, իր վեհութեան մէջ գեղեցիկ, յաւերժութեան մէջ իր յուսադրիչ:

Ատանայի «Ողբ»ի մեղեդին օդին մէջն էր տակաւին:

Այնթապի, Վանի, Մուշի եւ Եոզկատի հերոսներու «Թիւֆէնքներէն» արձակուած փամփուշտներուն սուլոցն ու «պարուտ»ի (վառօղ) հոտը տակաւին կը յամենային օդին մէջ:

Անին, ա՛խ այդ Անին: Նստած կու լար իր փառքի հին օրերը յիշելով: Իր հազարամէկ եկեղեցի-

Շարք էջ 19

Հայոց Ցեղասպանութեան 101րդ տարելիցի Ոգեկոչում

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ
Համագործակցութեամբ

Համահայկական Միութիւններուն
Կը ներկայացնէ

ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ՀԱՄԵՐԳ
Նուիրուած Հրանդ Տինքի Աւանդին
Պատուոյ Հիւր՝

ՌԱՔԵԼ ՏԻՆՔ
Երգահան՝ Մաժակ Թօշիկեան
Քնարերգակ՝ Պերճուհի Պերպերեան

Համահայկական Երգչախումբ եւ Նուագախումբ
Գեղարուեստական եւ Երգչախումբի Խմբավար՝ Ստեփան Կեօզիւմեան
Երաժշտութեան Ղեկավար՝ Արտաշէս Գարթալեան
Մենակատարներ

Սոփրանօ Սոփրանօ Թէնոր

Ալեւուշ Եղևազար Նատիմա Աւագեան ԴաՖֆի Գերպապեան

Շարաթ, Ապրիլ 16, 2016, երեկոյեան ժամը 7:30ին

Փասատինայի Ambassador Համերգասրահ
131 S. Saint John Ave.
Pasadena, CA 91105

Յաւելեալ մանրամասնութեանց եւ տոմսակներու համար հեռաձայնել (818) 342-0110
Ապրիլ գրատուն (818) 243-4112 Մարդարապատ գրատուն (818) 500-0790 Պերճ գրատուն (818) 244-3830

Կամ
bolsahye1976@gmail.com

ՀԵՆՐԻԽ ՄԻԻԹԱՐԵԱՆ. ԻՍԿԱՊԵՍ, ՀԻԱՆԱԼԻ ԵՐ ՅԱՂԹԵԼ ԱՅՍ ԽԱՂՈՒՄ



Ֆուտպոլի Գերմանիայի առաջնութեան 23-րդ տուրում Դորտմունդի «Բորուսիան» Հենրիխ Միիթարեանի կողմից ու կողային փոխանցման օգնութեամբ տանը 3:1 հաշուով կամային յաղթանակ տարաւ «Հոֆենհայմի» նկատմամբ: Ընդ որում՝ մինչեւ 80-րդ րոպէն հիւրերն առջեւում էին հաշուի մէջ:

Առաջին խաղակէստը «Բորուսիայի» մօտ ոչինչ էր ստացում առջեւի դժուր, իսկ 25-րդ րոպէին հիւրերը բացեցին հաշիւը եւ մինչեւ ընդմիջում պահպանեցին առաւելութիւնը:

Դորտմունդցիներն իրենց նման չէին նաեւ ընդմիջումից յետոյ, բայց 58-րդ րոպէին խաղադաշտից հեռացուեց «Հոֆենհայմի» աւագն ու խաղի հաշիւը բացած Սեբաստիան Ռուդիկ: Քանակական առաւելութիւն ստացած «Բորուսիան» սկսեց աւելի յաճախ գրոհել եւ 80-րդ րոպէին հաւասարեցրեց հաշիւը: Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միիթարեանը անկիւնային հարուածի խաղարկման արդիւնքում իր 9-րդ կողմից Գերմանիայի ընթացիկ առաջնութիւնում: Քիչ անց փոխարինամ դուրս եկած կոլումբացի յարձակող Ադրիան Ռամոսը նաեւ առաջ մղեց դաշտի տէրերին, իսկ աւելացուած ժամանակում գաբոնցի յարձակող Պիեր-էմերիկ Օբամէնգը Հենրիխ Միիթարեանի փոխանցումից յետոյ խփեց «Բորուսիայի» երրորդ կողմ՝ վերջակէտ դնելով խաղին:

Թոմաս Տուխելի թիմը շարունակում է 8 միաւոր գիջել առաջատար Միւնխենի «Բաւարիային» եւ 15 միաւոր էլ առաջ է անցել երրորդ տեղում գտնուող «Հերտայից»:

Հայաստանի հաւաքականի ու Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Միիթարեանը «Հոֆենհայմի» դէմ Գերմանիայի առաջնութեան 23-րդ տուրի յաղթական խաղում կողմի ու կողային փոխանցման հեղինակ դառնալուց յետոյ կիսուել է տպաւորութիւններով:

«Իսկապէս, հիանալի էր յաղթել այս խաղում: Զգացողութիւնները հրաշալի էին մինչեւ վերջը», - ֆէյսբուքեան էջում գրել է Միիթարեանը:

Opta Sports-ի համաձայն՝ ընթացիկ մրցաշրջանում Միիթարեանը գերմանական ակումբի կազմում մասնակցել է 37 խաղի՝ դառնալով 19 կողմի ու 19 կողային փոխանցման հեղինակ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ԿՈԼԸ ՅԱՂԹԱՆԱԿ Է ՊԱՐԳԵԻԵԼ ՎԱՐԴԱՐԻՆ

Մակեդոնիայի առաջնութեան 20-րդ տուրում «Վարդարը» հիւրերն ակումբի նուազագոյն հաշուով յաղթել է «Տուրնովոյին»: Հանդիպման միակ կողմ 52-րդ րոպէին հեղինակել է Հայաստանի հաւաքականի անդամ Յովհաննէս Համբարձումեանը, ով եղել է տանտէրերի մեկնարկային կազմում եւ մասնակցել է ամբողջ հանդիպմանը: Հայ ֆուտպոլիստը 7-րդ րոպէին արժանացել է դեղին քարտի:

Վնասուած քի պատճառով հանդիպմանը չի մասնակցել Արտակ Դաշեանը: Այս յաղթանակից յետոյ «Վարդարը» 49 միաւորով շարունակում է գլխաւորել մրցաշարային աղիւսակը:

ԼԻԼԻԹ ՄՎՐՏԹԵԱՆԸ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐԺՈՒԹԵԱՆ 2-ՐԴ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Հունգարիայում ընթացող հրաձգութեան Եւրոպայի առաջնութիւնում հիանալի ելուցի է ունեցել Լիլիթ Մկրտթեանը:

Ինչպէս յայտնում է ՀԱՕԿ-ի մամուլի ծառայութիւնը, վազող թիրախ՝ խաղը վազք վարժութեան երիտասարդ աղջիկները պաշարում Մկրտթեանը վաստակած 366 միաւորով գրաւեցրել է 2-րդ տեղը:

Նշենք, որ աւելի վաղ վազող թիրախ՝ խաղը վազքում երիտասարդ տղաների պաշարում Հայաստանի ընտրանին պրոնոզէ մետալ էր նուաճել:



«ՄԱՆՀԵՍԹԵՐ ՍԻԹԻՆ»՝ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԻԳԱՅԻ ԳԱԻԱԹԱԿԻՐ

«Մանչեսթեր Սիթին» պատմութեան մէջ չորրորդ անգամ դարձաւ ֆուտպոլի Անգլիական լիգայի գաւաթի խաղարկութեան յաղթող:

Լ ո Ն տ ո Ն ի « Ո ւ ւ ւ ր ւ ր » ստադիոնում կայացած եզրափակիչում մանչեսթերցիները



յետխաղեայ 11 մետրանոցներով յաղթեցին «Լիւերպոլին»: Խաղի հիմնական ժամանակն աւարտուել էր 1:1 հաշուով, իսկ Յուրգեն Կլոպի թիմը պարտութիւնից խուսափել էր վերջնամասում:

Յետխաղեայ 11 մետրանոցների ժամանակ «Լիւերպոլից» վրիպեցին Ֆելիպե Կոստինյոն, Ադամ Լալանան ու Լուկաս Լէյվան, իսկ էմրէ Ջանը դիպուկ իրացրեց հարուածը: «Մանչեսթեր Սիթիից» վրիպեց միայն Ֆերնանդինիոն, իսկ Խեսուս Նաւասը, Սերխիո Ագուերան ու Յայա Տուրէն դիպուկ էին:

«Մանչեսթեր Սիթին» Անգլիական լիգայի գաւաթակիր դարձել էր նաեւ 1970-ին, 1976-ին եւ 2014-ին:

ԶԻԴԱՆ. ՅԱՋՈՐԴ ՄՐՑԱՇՐՋԱՆՈՒՄ «ՌԷԱԼՈՒՄ» ԿԱՐՈՂ Է ՓՈԽՈՒԵԼ ԱՄԵՆ ԲԱՆ

Մադրիդի «Ռէալի» գլխաւոր մարզիչ Զինեդին Զիդանը մեկնաբանել է Սպանիայի առաջնութեան 26-րդ տուրում «Աթլետիկոյից» կրած տնային պարտութիւնը:

«Հիասթափուած եմ թէ՛ մեր խաղից, թէ՛ այս պարտութիւնից: Մեր խնդիրները ոչ թէ ֆիզիքական են, այլ՝ հոգեբանական: Այս պարտութիւնից յետոյ մեր խնդիրն աւելի բարդացաւ: Պէտք է չչանձնուենք: Խաղացողները խաղում են ֆուտպոլ, իսկ ես պատասխանատու եմ նրանց համար:

Մա ցաւալի հարուած էր մեզ համար: Չէի սպասում, որ տանը կը պարտուենք «Աթլետիկոյին»: Յաջորդ մրցաշրջանում «Ռէալում» կարող է փոխուել ամէն բան՝ մարզիչը, ֆուտպոլիստները», - Զիդանի խօսքը մէջբերում է Goal.com-ը:

Յիշեցնենք, որ մադրիդեան դերբիում «Ռէալն» առաջին պարտութիւնը կրեց ֆրանսացի լեգենդար ֆուտպոլիստի գլխաւորութեամբ եւ շարունակում է 9 միաւոր գիջել առաջատար «Բարսելոնային», որը մէկ խաղ էլ պակաս է անցկացրել:

Սպանիայի առաջնութեան 26-րդ տուրում «Աթլետիկոյից» կրած տնային պարտութիւնից յետոյ Պորտուգալիայի հաւաքականի աւագը յայտարարեց, որ եթէ «Ռէալում» բոլոր խաղային իր պէս, ապա թիմը կը լինէր առաջին տեղում, իսկ աւելի ուշ նշել էր, որ նկատի է ունեցել ֆիզիքական պատրաստուածութիւնը:

ՋԱՆԻ ԻՆՖԱՆՏԻՆՈՆ՝ ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՐ

ՌԵՖԱ-ի գլխաւոր քարտուղար Ջանի Ինֆանտինոն ընտրուեց ֆուտպոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) 9-րդ նախագահ: 45-ամեայ շուէյցարացին երկրորդ փուլում ստացել է 115 երկրների ֆեդերացիաների ձայնը:

Երկրորդ տեղում է մնացել Ասիայի ֆուտպոլային կոնֆեդերացիայի նախագահ շէյխ Սալմանը ստացել է 88 ձայն: Երկրորդ փուլում անհրաժեշտ էր հաւաքել քուէարկութեանը մասնակցած 207 ֆեդերացիաների ձայների կէսից աւելին:

Առաջին փուլում Ջանի Ինֆանտինոն ստացել էր 88 ֆեդերացիաների աջակցութիւնը: Երկրորդ տեղում էր շէյխ Սալմանը՝ 85:

Յորդանանի արքայազն Ալի բին Ալ Հուսէյնը 27 ձայնով երրորդն էր: Նա երկրորդ փուլում ստացել է 4 ձայն:

ՖԻՖԱ-ի գլխաւոր քարտուղարի նախկին տեղակալ, ֆրանսացի Ժերոմ Շամպանը 7 ձայնով վերջինն էր, երկրորդ փուլում ձայն չի ստացել:

Առաջին փուլում յաղթանակի համար անհրաժեշտ էր ձայների 2/3-ից աւելի (138):

Ընտրութիւնից առաջ թեկնածութիւնը հանել էր հարաւափրիկացի գործարար Տոկիո Սեկվալէն:

ՖԻՖԱ-ի նախագահի պաշտօնավարման ժամկէտը չորս տարի է:



ԱՆԴՐԱՆԻԿԻ ՈՒՂԻՆ

Շարունակում է 6-էն

քը Անդրանիկին դարձաւ, անուն էր, որ Սասնայ լեռներից ծաւալուեց ու հասաւ կորած խրճիթներին: Մի՛ հարցնէք ինչպէս, քամիները բերին: Ո՞վ էր Անդրանիկ, ո՞ւր ծնուած, ո՞ւմ գաւակ, հարցնող չկար, ոչ ոք զիտէր նրա ազգանունը, տարիքը, պատկերը, նա միայն Անդրանիկ էր, անհայր ու անմայր, ասես հողից հրաբուխի պէս ժայթքած: Ժողովուրդը յօրինել էր նրա կերպարանքը իր ուզածի պէս, իր վառ երեւակայութեամբ:

Սասունի հերոսը Դաւթի ու Մհերի ժառանգն է, ուրեմն եւ նրանց պէս սոսկավիթխար, ձայնը՝ անզնադղորդ, բազուկը՝ խորտակիչ, աչքերը՝ կայծակի»: Ապա՝ «Ժողովուրդը սիրում էր նախ յանդգնութիւնն ու հերոսականը: Անդրանիկի անզգին ժողովրդականութեան աղբիւրն ու բացատրութիւնը նրա եզակի արիութեան եւ բարձր անձնութեան մէջ է, որ կախարդանքն է ամբոխներին: Զուլումի տակ կորաքամակ ազգը երջանիկ էր, որ Մէլը կայ լեռներում, մենաւոր առիւծ, որ աջ ու ձախ հարուածում է իր դրացիներին»:

Անդրանիկի բարեմասնու-

թեանց անդրադառնալով Ե. Քաջունի կը գրէ. «Եղաւ միշտ արդարամիտ ու չանդուզն՝ առասպելական չափերով: Կուր վարելու, դիրքեր ընտրելու անոր ընդունակութիւնը մարգարէութեան կը մօտենար»: «Իբրեւ մարդ՝ անշահախնդիր էր, ուղղամիտ ու արդարադատ: Ունէր սքանչելի յիշողութիւն եւ պատմելու շնորհք»:

Կարգապահական խստապահանջութեամբ անհաղու Անդրանիկ իր մարտական սկզբունքները փոխանցած է «Մարտական Հրահանգներ» գրքոյով, իսկ թրքերէնի եւ քրտերէնի քաջ իմացութիւնը եղած է յաւելեալ գործօն սթափ ու զօն կողմնորոշման:

Ուրեմն՝ Զօրավար Անդրանիկի ծննդեան 151 ամեակին առիթով կը խոնարհինք անոր կեանքի ուղիին ընդառաջ՝ որ ռազմականօրէն եղաւ անվրէպ, քաղաքականօրէն եղաւ հեռատես եւ ընկերային առումով՝ ժողովրդանուէր: Իսկ ամենակարեւորը անոր ուղիին հետեւողները կը հաստատեն որ Անդրանիկ անմահ է, ամէնօրեայ ներկայութիւն է ու պատգամ: Վկայ՝ Երեւանի սիրտին զոյգ յովատակով աշտանակող մարմարակերտ շքեղ ասպետ Զօրավար Անդրանիկի անյողդող տիպար-արձանը:

Ծնունդդ շնորհաւոր փաշա:

ԼԵԶՈՒԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻ

Շարունակում է 7-էն

յութիւն ունին համապատասխանող հայերէնով բառերը: Ինչո՞ւ չի մաքրագտել զանոնք...

Հայոց լեզուի որակաւոր նոր դասագիրքերու պատրաստութիւն:

Համահայկական հարցերէն մին է դասական հայերէնի ուղղագրութեան որդեգրումը:

Քաջալերել երիտասարդները որպէսզի հայերէն գրեն եւ աշխատիլ անոնց հայ ինքնութեան վրայ:

Ացցել վարժարանները եւ հանդիպիլ տնօրէններու հետ:

Ներկայիս երկու տեսակի ուղղագրութիւն ունենալը քննադատելի է: Անոնց մերձեցումը կենսական է:

Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային կից Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի կաճառի պատասխանատուներուն հետ հանդիպումներ ունենալ: Լայն համագործակցութիւն պէտք է ունենալ նաեւ

Հայաստանի Կրթութեան եւ Մշակոյթի նախարարութիւններուն ու այլ կազմակերպութեանց հետ:

Մեծ է դերը ծնողներուն եւ ընտանիքներուն, որոնց վիճակուած է նաեւ կարեւոր բաժին մը հայոց լեզուի գործածութեան մէջ:

Հաւաքի աւարտին Տօքթ. Յ. Անթապլեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ելույթ ունեցողներուն: Ան աւելցուց նաեւ որ ներկայացուած յայտագիրը հինգ տարուան մէջ իրագործուելիք ծրագիր մըն է: Նշեց նաեւ որ յառաջիկայ Յունիսի ընթացքին ծրագրած է երկու ամսուան այցելութիւն տալ Հայաստան եւ այդ հարցով շահեկան հանդիպումներ ունենալ հայրենի պատկան շրջանակներու հետ:

Հայոց լեզուի պահպանման գծով գեղեցիկ ծրագիրներով ճամբայ ելած է «Մեսրոպեան Ուխտ»ը, որուն ազգային վսեմ եւ դժուարին առաքելութեան բարի երթ եւ յաջողութիւն կը մաղթենք:

Եւ, մինչեւ հասնինք Կատարին այդ մեր Սուրբ «Գալ Տարի Վան»ը պիտի ընենք լոգու՛նքը մեր սրբազան:

~~*~*~*~*~*~*~*~*~*~*~*~*~*~*~*~*~*

Այս մտորումներով, այս հաւատքով, այս վճռակամութեամբ, տրոփուն սրտերով վերադառձանք մեր տունները: Յետսութիւն, ի՛մ Հայրենիք:

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՍՏԱՅԱՅԱՍՏԱՆԵՆ

Շարունակում է 15-էն

ները փառակերտ, անգոր էին փրկելու զինք չարիքէն այդ կործանիչ:

Աւա՛ղ, փառացս անցաւորի: Կարսի բերդը խրոխտ, բարձրունքներէն իր անառիկ, յոյս եւ հաւատք կը ցանէր մեր հոգիներուն մէջ մղկտացող:

Անդրանիկ փաշայի ձիուն ամբակներուն դոփինները կը լսէինք լեռներուն վրայ իրզրումի:

Սուրբ Վրէժը մեր նահատակներուն պատած էր հոգիները ըմբոստ մեր հրդեհուած:

Եւ հոգիները մեր ըմբոստ՝ էին պատրաստ պոռթկալու...:

Մոռնա՛լ՝ Ե՛րբեք: Ներե՛լ՝ Ո՛չ:

Մեղա՛յ, Մեղա՛յ Արարատին: Եւ մենք, զաւակներն ու թոռները նահատակուած մեր ազգի որբերուն, անգամ մը եւս վճռապէս ուխտեցինք չմոռնալ դժոխային տառապանքը մեր սուրբ նահատակներուն, անբեկանելիօրէն ուխտել անգամ մը եւս, որ օր մը, Օ՛Ր ՄԸ պիտի վերադառնանք Արարատի լանջին ու Սասունի լեռներուն վրայ պիտի պարենք Պարը Սասունցիներուն եւ շուրջպարերը մեր ազգային՝ շուրջն Արարատին:

Կը կրկնեմ: Եթէ՛ ոչ մենք, ապա մեր զաւակները, եթէ՛ ոչ մեր զաւակները, ապա մեր թոռները, եթէ՛ ոչ մեր թոռները, ապա մեր ծոռերը կամ անոնց թոռներն ու ծոռերը պիտի գան տէ՛ր կանգնելու

JOB OPENNING
Director of Cultural Events: organize & execute Armenian cultural events from conception to completion, aiming to increase awareness of ethnography & to preserve ancient cultural arts & traditions; entertain/educate the community. BS degree, alternative, equivalent, or foreign equivalent in event management, Armenian studies or related field required. Job site & interview: Glendale, CA.
Email resume to hiamfoundation@hotmail.com or mail to Hi-Am Charity Foundation at 530 W Stocker St #307, Glendale, CA 91202.

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռ.աձայնել՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ
Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԼԵՆՏԵՅԼ - ՓԱՍՏՏԻՆԱ ՄԱՍՆԱՃԻԳԸ
ԿԵ ՆԵՐԿԱՅՈՒՆԵՐ
CHUSHI
ՆԻԻ ԵՈՐԵԻ ՍԲ. ՎՍՐԳԱՆ ՄԱՅՐ ՏԱՄԱՐԻ ԸՈՒԵԻ ՊԱՐԱՆՈՒՄԸ ՈՐ ՄԵՃԻ ԿՈՒ ԳՅԵ ԻՐ ԶՈՂԹՅՈՒՆ ԵՆՅՈՒՄՈՒՄԻ, ԵՐԵՍԻ, ՍՐԵՍՈՒԻ ԵՒ ՆԻԻ ԵՈՐԵԻ ՄԵՃ
REMEMBER 1915 & RISE!!!
BETH PASKALIAN KANTARDJIAN Artistic Director Choreographer
ANDRANIK MOURADIAN Musical Director
ARA GEVORGYAN GUEST OF HONOR
VOCALISTS
Sunday, April 10, 2016 at 4:00pm - John Wayne Performing Arts Center
Glendale High School, 1440 East Broadway, Glendale, Ca 91205
TICKETS: \$100, \$80, \$60, \$40, \$25 • FOR TICKETS CALL 626-627-1952 SIRAN • 626-355-3997 ASOSHI • 616-606-6008 ALICE
BUY ONLINE AT WWW.FUTUTIK.COM/ITCAPASADENAGLENDALE WWW.SHUSHIDANCE.ORG

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆՐԱԲԱԽԱՔ

ԹՐՔԱԿԱՆ ԲԻՊԱՏՈՍԱՐԱՆ

6300 Wilshire Blvd., Los Angeles / Crescent Heights

ԿԻՐԱԿԻ, 24 ԱՊՐԻԼ, ԺԱՄԸ 1-ԻՆ



ՀԱՆՐԱԿԱՌՈՎ
ՓՈՒՍԱԳՐԱՄԻՋՈՑ՝
ԿԷՍՕՐՈՒԱՆ ԺԱՄԸ 12ԻՆ

ՄԵԿՆՈՒՄԻ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԱՅՐԵՐ

- | | | |
|-----------|-------------|--------------|
| ԿԼԵՆՏԷՅԸ | ՎԵՆ ԿԱՅՍ | ՆՈՐԹ ՀԻԼՁ |
| ՍԱՆԹԱ ԱՆԱ | ԹԱՀԱՆԿԱ | ՊԸՐՊԵՆԻ |
| ՓԱՍԱՏԻՆԱ | ԷՆՍԻՆՕ | ՆՈՐԹ ՀՈՒՎՈՒՏ |
| ՄՈՆԹԵՊԵԼԸ | ՔԱՆՈԿԱ ՓԱՐԻ | ՀՈՒՎՈՒՏ |

WWW.RALLYFORJUSTICE.ORG | 1(877)477-2559

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

Հիմնադրվել է Ամերիկայի Հայ Կոնգրեսի Եկեղեցուց Արևմտյան ՔՆՎ, Ամերիկայի Միացյալ Նահանգներու Հայ Կոնգրեսի Եկեղեցուց Արևմտյան ՔՆՎ, Հիսթորիկ Մեթոդիկ Եկեղեցի, Հիսթորիկ Մեթոդիկ Հայ Անկախության Միություն, Դաժնագրի Ազատության Կոնգրեսը թիվ, Հայ Բնագրի Կոնգրեսը թիվ, Օսթոն Դեմոկրատիկ Ներքինի Կոնգրեսը թիվ, Հայ Բարեգործության Միությունը Միություն Միացյալ Նահանգներու Արևմտյան Երրան, Հայ Օրհնության Միություն Միացյալ Նահանգներու Արևմտյան Երրան, Հայ Երկրաբանական Կոնգրեսը թիվ, Ամերիկայի Հայկական Համագործակցության Կոնգրեսը, Արևմտյան Ամերիկայի Հայ Դատի Թանկախություն, Ամերիկայի Հայկական Խորհուրդը, Հայկական Կրթության Կոնգրեսը, Հայկական Կրթության Կոնգրեսը թիվ, Կոնգրեսը Միություն